№ 145 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31
1907
ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31 № 145

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ
ԵՐԿՈՒ րուբլի
Մի ամսվայ համար 1 րուբլի

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՀԻՄՆՎՈՂ
II փոխադարձ վարկի ընկերութեան
Ընդհանուր ժողովից ընտրված
ԼԻԱԶՕՐՆԵՐԸ

Խոնարհաբար խնդրում են յիշեալ ընկերութեան անդամ գրված անձերին շտապել մտցնել փողը Պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքը լիազօրներ Ա. Տ. Վարդապետովի, բժշ. Վ. Մ. Արղութեան-Երկայնաբազուկի և Լ. Ֆ. Տիգրանեանի անունով։ Բաժանորդագրութիւնը շարունակվում է նոտար Կ. Նիկոլաեվի գրասենեակում (Գանովսկայա փող. № 3)։ Վճարի վերջնական ժամանակամիջոցը վերջանում է 1907 Թ. նոյեմբերի 1-ին։ Մինչև յիշեալ ժամանակամիջոցը փող չը վճարողները հանվում են անդամութեան ցուցակից։ առ. (և. չ. հ.) 2—3

Երեկոյեան դասընթացքներ մայրերի եւ դաստիարակչուհիների համար
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
(Միքայէլեան պրոսպ. № 138)

Պարապմունքների առարկաներն են՝ մանկավարժութիւն, մանկավարժական հոգեբանութիւն, մարդակազմութիւն և ֆիզիօլոգիա, առողջապահութիւն (գլխաւորապէս մանկան), առաջին օգնութիւն հասցնելը, կենդանաբանութիւն և բուսաբանութիւն, առօրեայ կեանքի քիմիա, մանկական պարտէզների թէօրիա, գործնական պարապմունքներ մանկական պարտէզներում։ Ունկնդրուհիների ընդունելութիւնը սեպտեմբերի 28-ից։ Պարապմունքների սկիզբը հոկտեմբերի 9-ից։
(առ.) (չ. ու.) 2—6

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղապահական հարցը. Հայաստանը մոռացված. Կաթողիկոսի մահվան առիթով. Կենսագրական տեղեկութիւններ. Վերջին տեղեկութիւններ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը. Պետական Խորհրդի լրացուցիչ ընտրութիւնները. Ովքեր են հոկտեմբերականները. Արտասահմանեան մամուլի կարծիքը երրորդ Դումայի մասին. Թատրօն և երաժշտութիւն. Կովկասահայ աղէտեալների օգտին. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. Որտեղ է ճշմարտութիւնը. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Հաագայի կոնֆ. արդիւնքը. Ահալի հարցը. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

## ՏԵՂԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվամբ՝ կաթողիկոսական տեղապահի պաշտօնը անցնում է Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանին, իբրև սինոդի աւագագոյն անդամի։ Ինչ վերաբերում է Ներսէս արքեպիսկոպոսին, նա կարող է տեղապահ լինել միայն այն ժամանակ, երբ կառավարութեան կողմից հաստատվի սինոդի անդամ, որպիսի պաշտօնի համար նա առաջարկվել է Կաթողիկոսի կողմից մի քանի ժամանակ առաջ։

Ընդունելով իբրև կատարված իրողութիւն, որ տեղապահն է Գէորգ արքեպիսկոպոսը, մենք այլևս աննպատակ ենք համարում տեղ տալ «Մշակի» մէջ այն յօդուածներին, որ նորերս ստացանք մի քանի տեղերից տեղապահական խնդրի մասին։ Ի հարկէ, ընդհանուր տեսակէտով, հայ ժողովրդի և եկեղեցու շահերի տեսակէտով ոչ Գէորգը և ոչ Ներսէսն են յարմար տեղապահութեան պաշտօնի համար, և աւելի ցանկալի կը լինէր, եթէ տեղապահն էլ ընտրվէր ժողովրդի ձեռքով. սակայն այդ ամենը առայժմ ցանկութիւն է և ներկայումս ոչինչ անել չենք կարող։

Այժմ ամենաառաջին գործը, որ պէտք է յանձնարարել սինոդին և նոր տեղապահին, այդ այն է, որ կտրուկ և իրական միջոցներ ձեռք առնվեն, որպէսզի Գէորգ և Մակար կաթողիկոսների մահից յետոյ պատահած օրինակների նման՝ հայրապետական աթոռին պատկանող իրերը, գոյքը և ազգային սեփականութիւնը չը յափշտակվեն և չը դառնան զանազան ազգականների և ծառաների սեփականութիւն։

Հայ ժողովուրդը իրաւունք ունի այդ պահանջել թէ տեղապահից և թէ սինոդից։ Խրիմեանի կաթողիկոսութեան օրով Էջմիածնին բազմաթիւ թանկագին ընծաներ, արժէքաւոր նուէրներ և գումարներ են տրվել. պէտք է կազմել դրանց ցուցակը, ստուգել և թոյլ չը տալ, որ նրանք դառնան մասնաւոր սեփականութիւն։

Հ. Ա.

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՌԱՑՎԱԾ

Եւրոպական մեծ պետութիւնների վերջերս իրար մէջ կնքած դաշնագրերի և համաձայնութիւնների հրատարակութիւնը ցոյց տուեց մի տարօրինակ և անարդար վարմունք, որին հետևում են այդ պետութիւնները իրանց համաշխարհային քաղաքականութեան մէջ։

Այդ դաշնագրերից ամենագլխաւորը և ամենաէականը—անգլօ-ռուս համաձայնութեան պայմանագիրը — թէև պաշտօնապէս դեռ ամբողջովին չը հրատարակվեց, բայց բովանդակութիւնը ծածուկ չը մնաց։ Այդ պայմանագիրը շօշափում է միջազգային բոլոր այն հարցերը, որոնք գժտութեան, թշնամութեան և մրցման առարկայ էին դառել տասնեակ տարիներից ի վեր Անգլիայի, Ռուսաստանի, Աւստրիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի մէջ և շարունակ սպառնում էին համաշխարհային խաղաղութեան, և նրանց վերաբերմամբ կայացել է որոշ համաձայնութիւն, բայց մի ուրիշ հարց, որ նոյնպէս տասնեակ տարիների ընթացքում միջազգային և միջպետական հարց էր, որ սպառնում էր նոյնպէս համաշխարհային խաղաղութեան, որի մասին մեծ պետութիւնները ահագին ջանքեր, բանակցութիւններ են արել և որը առաջ է բերել հարիւր հազարաւոր անմեղ զոհեր և մեծ արիւնահեղութիւն,—ահա այդպիսի մի հարց՝ Փոքր-Ասիայի րէֆօրմների հարցը կամ այլապէս «Հայոց հարց» կոչվածը՝ միանգամայն անտես է առնվել և մոռացութեան տրվել։

Այդ իրողութիւնը վերին աստիճանի տարօրինակ է. հայոց հարցը, այսինքն Փոքր-Ասիայի հայաբնակ նահանգներին րէֆօրմներ տալու հարցը, դարձել էր 1878 Թ. ի վեր Անգլիայի և Ռուսաստանի մէջ մշտական հակառակութեան և մրցութեան գլխաւոր առարկայ։ Եւ հէնց այդ հակառակութիւնն ու մրցութիւնն էր պատճառ, որ Թիւրքաց Հայաստանի բարեկարգութեան հարցը, Փոքր-Ասիայի քրիստոնեայ ազգաբնակութեան և մասնաւորապէս հայ ժողովրդի տառապանքի և ամբողջ երկրի յետամնացութեան հարցը, չէր լուծվում ու թիւրքաց սուլթանը մեծ ճարպիկութեամբ օգտվում էր այդ մրցութիւնից և հակառակութիւնից՝ իր գժոխային ծրագիրները առաջ քշելու։

Ակնյայտ իրողութիւն է, որ Փոքր-Ասիայի վիճակը աւելի սոսկալի և վատթար է, քան Մակեդոնիայի վիճակը, բայց այդ մասին ոչ մի խօսք անգլօ-ռուսական համաձայնութեան մէջ։

Այդ հանգամանքը եգիպտական «Journal du Caire» հետևեալ կերպով է բացատրում։

Անգլիայի բաղձանքն է այժմ որ սուլթանից որոշ արտօնութիւններ ձեռք բերէ։ Միւս կողմից Ռուսաստանն ևս երկիւղ է կրում, որ Աբդուլ-Համիդը չընկնի Գերմանիայի գիրկը, ուստի այդ նկատումներով երկու պետութիւններն ևս զոհեցին Մերձակայ Արևելքը և վճռեցին թողնել նրան իր ճակատագրին։

Սակայն,—ճիշտ նկատում է թերթը,—պատմութիւնը իր որոշ ընթացքն ունի և կը շարունակէ։ Դիւանագիտութիւնը միշտ ստիպված է հետևել մարդկութեան, երբ ինքը չէ կարողանում կանխել և առաջնորդել։ Վերջ ի վերջոյ՝ տառապող մարդկութիւնը կը ստիպէ դիւանագիտութեանը՝ ուշադրութիւն դարձնել իր վրա։

Շատ ցաւալի է, ի հարկէ, որ հայոց հարցը, այնքան մեծ ցնցումներ, այլափոխութիւններ կրելուց յետոյ, այսօր բոլորովին մոռացութեան է տրվում։ Բայց այդ հանգամանքը պէտք է ստիպէ մեզ մտածել, թէ այժմ ինչ ընթացքի պէտք է հետևենք, որ կարողանանք ազատել մեր թշուառ ազգը կորստից։ Մինչև այժմ փորձված միջոցները ոչ միայն անարդիւնք մնացին, այլև աղէտալի հետևանքներ ունեցան, որոնց մինն ևս այն է, որ այսօր Անգլիան և Ռուսաստանը բոլորովին բարձի-թողի արին մեզ հայերիս, մինչ մենք նրանցից էինք ակընկալում թշուառ Հայաստանի փրկութիւնը։

Հ. Առաքելեան

## ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

«Кавказъ» լրագիրը հաղորդում է.

«Էջմիածնի Սինոդի պրոկուրորի պաշտօնակատար Յովհաննիսեանը հեռագրով զեկուցեց հոկտեմբերի 29-ին Փոխարքային, որ կիրակի օրը, հոկտեմբերի 28-ին, երեկոյեան ժամը 6-ին, Տէր-Խաչատրեանց և Տէր-Աւետիքեանց բժիշկները, զննելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին գտան, որ նրա սրտի գործունէութիւնը շատ թուլացել է, թէև Նորին Սրբութիւնը լիակատար գիտակցութեան մէջ էր։ Հիւանդի դրութեան մասին կազմվեց արձանագրութիւն Սինոդի անդամների և միաբանների ներկայութեամբ։ Որոշվեց երկուշաբթի կոնսիլիում սարքել, բայց հոկտեմբերի 29-ին, Նորին Սրբութիւն Պատրիարք Մկրտիչը վախճանվեց առաւօտեան ժամը 9-ին»։

«Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտչի թաղման Էջմիածին է ուղարկվում, իբրև Փոխարքայի ներկայացուցիչ, գնդապետ Ա. Ի. Ղազարեվ»։

---

Էջմիածին, 30 հոկտեմբերի

Վախճանվեց Ծայրագոյն Ծերունի պատրիարք ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ I-ը։ Հայկական եկեղեցու կանոնի համաձայն, Կաթողիկոսի գահը մի տարի թափուր պէտք է մնայ։

(«Հ. Գ.»)

---

Ինչպէս հաղորդեցինք երէկ, հոկտ. 30-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ I Խրիմեան վախճանվեց Էջմիածնում հոկտեմբերի 29-ին, երկուշաբթի, առաւօտեան ժամը 9-ին, 87 տարեկան հասակում։

Թիֆլիսում առաջին հեռագիրը ստացվել էր անմիջապէս մահից յետոյ Փոխարքայի պալատում, որտեղից լուրը տարածվեց քաղաքում. սակայն հայոց առաջնորդարանը, ուր, բնականաբար, դիմում էին շատերը լուր ստանալու, ոչ մի տեղեկութիւն չունէր։ Սինոդը, իր յայտնի դանդաղկոտութեամբ, երևի մոռացել էր այդ մասին իր ժամանակին հեռագրել առաջնորդներին, և Թիֆլիսի առաջնորդը հեռագիր ստանում է միայն երեկոյեան ժամը 7-ին, որով սինոդը, գուժելով Կաթողիկոսի մահը, յայտնում է, թէ թաղումը նշանակված է նոյեմբերի 6-ին, երեքշաբթի։

---

Երեկոյեան Թիֆլիսի դումայի նիստը լինելով, քաղաքագլուխ Չերքեզովի առաջարկութեամբ դուման որոշեց յետաձգել իր նիստը ի յարգանս Հայոց Եկեղեցու կրած կորստի։

---

Նոյն երեկոյ՝ Հայոց Դրամատիկական ընկերութեան և գերասանական խմբի որոշմամբ՝ յետաձգվեց թատրոնական ներկայացումը։

---

Թիֆլիսի առաջնորդի կարգադրութեամբ, այսօր, հոկտեմբերի 31-ին, առաւօտեան ժամը 10-ին նշանակված է Վանքի մայր եկեղեցում պատարագ, իսկ ժամը 12-ին հանդիսաւոր հոգեհանգիստ։ Թեմի բոլոր եկեղեցիներում ամէն օր, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, կը կատարվի հոգեհանգիստ։

---

Բոլոր ծխական դպրոցների սաները արձակված են ուսումից հոկտեմբերի 30-ին և 31-ին, և նոյեմբերի 6-ին, Կաթողիկոսի թաղման օրը։

Երէկ Ներսիսեան դպրոցի վարչութիւնն ևս արձակեց աշակերտներին։

---

Առաջնորդի կողմից Կաթողիկոսի մահը պաշտօնապէս յայտարարված է Կովկասի Փոխարքայի դիւանատան, Վրաստանի էկզարխին, նահանգապետին, քաղաքագլխին և արհեստաւորների աւագին։

---

Երէկ, հոկտ. 30-ին, Թիֆլիսի նահանգապետը այցելելով Թեմիս առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին, յայտնեց իր ցաւակցութիւնը Վեհափառ Կաթողիկոսի մահվան առիթով։

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մկրտիչ Խրիմեան ծնվեց Վան քաղաքում 1820 Թ. ապրիլի 4-ին և իր սկզբնական կրթութիւնը ստացաւ Աղթամարի վանքում։ Մանկութիւնից նա ցոյց տուեց ուշիմութիւն և հասկացողութիւն ու բաւական մեծ առաջադիմութիւն ուսման մէջ, որ այն ժամանակ բովանդակված էր կրօնական գիտելիքների և հայկաբանութեան մէջ։ Նրա հօրեղբայր Խաչատուրը, որ մեծ ազդեցութիւն ունեցաւ նրա վրա, հանելով նրան վանքից, ամուսնացրեց, բայց երիտասարդ Մկրտիչը, որ ուսանելու և կատարելագործվելու մեծ սէր ունէր, ձեռնարկեց ճանապարհորդութեան Հայաստանում, անցաւ Պարսկաստանի վրայով Անդրկովկաս, այցելեց Էջմիածինը և գնաց Կ. Պոլիս։ Իր տպաւորութիւնները այդ ճանապարհորդութեան և Հայաստանի դրութեան մասին նա յետոյ երգեց «Հրաւիրակ Արարատեան» պօէմայի մէջ, որ նրա գրական անդրանիկ աշխատութիւնն էր։

Կ. Պոլսում Խրիմեան լաւ ընդունելութիւն գտաւ և այդտեղից գնաց Երուսաղէմ ուխտ անելու նուիրական տեղերին։ Իր տպաւորութիւնները նա երգեց «Հրաւիրակ երկրին Աւետեաց» հեղինակութեան մէջ։ Դրանից յետոյ պատրիարքարանի յանձնարարութեամբ գնաց Կիլիկիա, որտեղից վերադարձաւ 1855 Թ. Վան, ուր մեռած գտնելով իր կնոջ և աղջկան, վարդապետ ձեռնադրվեց և նշանակվեց Վարագի վանքի վանահայր։

Այդտեղ նա կամեցաւ հիմնել դպրոց, տպարան, բայց միաբանների կողմից աջակցութիւն չը գտնելով, նա ստիպվեց գնալ Պոլիս, ուր այդ ժամանակ սկսվել էր ազգային մտաւոր և քաղաքական վերածնութեան մի շարժում, որի հետևանքն եղաւ ազգային սահմանադրութեան ստեղծումն։ Գլխաւոր օջախն այդ շարժման Օտեանի տունն էր, ուր սկսեց յաճախել և Խրիմեան վարդապետը և նկարագրել Հայաստանի դրութիւնը։ Շուտով, նոյն 1855 Թ. նա նշանակվեց Իսկիւտար Թաղի եկեղեցու քարոզիչ և ձեռնարկեց այդտեղ հրատարակել «Արծիւ Բիւզանդիոնի» թերթը։ 1857 Թ. նա վերադարձաւ Վան արդէն իբրև վանահայր Վարագի վանքի։

Այդտեղ ահա սկսվում է նրա գործունէութիւնը. նա հաստատեց Վարագի վանքում ժառանգաւորաց դպրոց, հիմնեց մատենադարան և «Արծիւ Բիւզանդիոնի» փոխարէն սկսեց հրատարակել «Արծիւ Վասպուրականի» ամսաթերթը։ Հայաստանի խորքում այդպիսի մի ժամանակ ամսաթերթի հրատարակութիւնը, անկասկած, մի մեծ երևոյթ էր, և Խրիմեանի այդ գործը պատմութիւնը կը գնահատէ անշուշտ։ Սակայն նիւթական միջոցների պակասութիւնը ստիպեց Խրիմեանին մի նոր ճանապարհորդութիւն կատարել Թաւրիզ, Անդրկովկաս, 1860 Թ., և թէև թոյլտւութիւն ստացաւ Մատթէոս կաթողիկոսից քարոզելու, բայց Թիֆլիսում նրան արգելվեց քարոզել և առաջարկվեց հեռանալ։ Թիֆլիսից Պարսկաստանի վրայով վերադարձաւ Վան։ 1862 Թ. Խրիմեան նշանակվեց Մուշի ս. Կարապետ վանքի վանահայր, թողնելով Վարագում իր աշակերտներին (Թոխմախեան և այլք) և իր հետ տանելով Գ. Սրուանձտեանին։

Բայց այդտեղ շուտով մեծ գժտութիւններ ծագեցին. վանքի միաբանութիւնը պառակտվեց, ընդդիմացաւ նոր վանահօր ձգտումներին՝ փոփոխութիւններ մտցնելու վանքի վարչութեան մէջ, ստեղծվեցին կուսակցութիւններ, ահագին մեղադրանքներ բարդվեցին Խրիմեանի վրա, որ վերջ ի վերջոյ ստիպվեց Կ. Պոլիս գնալ և արդարանալ Ազգային Վարչութեան առաջ։ Գործը վերջացաւ նրանով, որ Խրիմեան անմեղ ճանաչվեց և նրա հակառակորդները աքսորվեցին Երուսաղէմ։ Ապա Ազգային Ժողովը որոշեց եպիսկոպոս ձեռնադրել տալ Խրիմեանին, և ուղարկեց նրան Էջմիածին, ուր 1868 Թ. նա ձեռնադրվեց Գէորգ IV կաթողիկոսից եպիսկոպոս։ Էջմիածնից նա վերադարձաւ իր վանքը՝ Մուշ, բայց 1869 Թ. Ազգային Ժողովի կողմից ընտրվելով պատրիարք Թիւրքահայերի, ստիպվեց թողնել վանքը և վանահայրութիւնը։

Հայ ժողովուրդը Թիւրքիայում մեծ յոյսեր էր դրել Խրիմեանի պատրիարքութեան վրա, բայց այդ փայլուն յոյսերը չիրականացան, դժբաղդաբար, և նա մի քանի տարի պատրիարքութիւն անելուց յետոյ ստիպվեց 1873 Թ. հրաժարական տալ, մանաւանդ երբ Սսի կաթողիկոսութեան խնդրի մէջ նա ընդհարվեց Գէորգ կաթողիկոսի հետ։ Նա Ազգային Ժողովի մի մասի կողմից հրատարակվեց նոյնիսկ հակա-սահմանադրական. այդ ամբաստանիչ մասի գլխաւոր օջախը՝ «Ղալաթիայի օջախ» կոչվածն էր, որի գլխաւոր անդամներից մինը՝ Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանն էր։ Արդարութիւնը պահանջում է ասել, որ Խրիմեան մեղադրվում էր և ազգային գումարների վատնողութեան մէջ, բայց Ազգային Ժողովի կողմից նշանակված մի յանձնաժողով, նոր պատրիարք Ներսէսի նախագահութեամբ, քննելով գործը՝ յայտարարեց այդ մեղադրանքն անհիմն։

Հրաժարվելով պատրիարքութիւնից, Խրիմեան մնաց Կ. Պոլսում և զբաղվեց գրականութեամբ։ Նա հետզհետէ գրեց «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամուէլ», «Յիսուսի վերջին շաբաթը», «Մարգարիտ արքայութեան երկնից»։

1876 Թ. Թիւրքերը Վան քաղաքում կրակ տուին հայոց շուկաները և Վանը մեծ աղէտի ենթարկվեց։ Այդ առիթով Խրիմեան գրեց «Վանգոյժը», որ բանաստեղծական մի գեղեցիկ գործ է, իսկ դրանից յետոյ շուտով գրեց «Հայգոյժը», որի մէջ նկարագրեց հայ ժողովրդի տառապանքը։

Ռուս-Թիւրքական պատերազմը վերջանալուց յետոյ, Ներսէս պատրիարքը մի պատգամաւորութիւն ուղարկեց Եւրոպա՝ հայոց հարցը Բերլինի կոնգրէսի առաջ պաշտպանելու. այդ պատգամաւորութեան աւագ պատուիրակն էր Խրիմեան։ Ի հարկէ, Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը չէ կարելի համարել արդիւնք այդ պատգամաւորութեան ջանքերին, բայց յամենայն դէպս պատգամաւորութիւնը որոշ տպաւորութիւն թողեց եւրոպական դիպլօմատների վրա: 1880 թ. Հայաստանում սով սկսվեց և Խրիմեան ուղարկվեց Վան օգնութեան գործը ղեկավարելու. օգնութիւն հասցնում էր Կ. Պոլսում կազմված Սովելոց Յանձնաժողովը: Այդ ժամանակ Խրիմեան բացեց Վարագի վանքում երկրագործական դպրոց, որը սակայն շուտով փակվեց, միջոցներ չունենալու պատճառով: Մնալով Վանում իբրև առաջնորդ մինչև 1885 թ., նա Ներսէս Վարժապետեանի մահից յետոյ ստիպվեց գնալ Կ. Պոլիս Թիւրքաց կառավարութեան պահանջով: Պոլսում նա մնաց մինչև 1890 թ., երբ սուլթանի հրամանով աքսորվեց Երուսաղէմ:

Վերջապէս 1892 թ. մայիսի 5-ին Էջմիածնում գումարված համազգային-եկեղեցական ժողովը Մակար կաթողիկոսի մահից յետոյ ընտրեց Խրիմեանին, միաձայն, կաթողիկոս ամենայն հայոց, որ, ռուսաց կառավարութեան ջանքերով ազատվելով աքսորից, եկաւ Էջմիածին ու 1903 թ. սեպտ. 26-ին օծվեց կաթողիկոս:

Իբրև կաթողիկոս, նա չարդարացրեց հայ ժողովրդի ակնկալութիւնները: Նրա կաթողիկոսութեան շրջանը, թէ իրանից անկախ պատճառներով և թէ իր անհաշիւ, անխոհեմ գործունէութեամբ, երբ յաճախ ժողովրդասիրական քայլերի հետ միասին անվում էին սաստիկ հակաժողովրդական քայլեր, մի աղէտալի շրջան եղաւ հայոց եկեղեցու համար, որի անաչառ լուսաբանութիւնը, ի հարկէ, պատկանում է պատմութեան:

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 29 հոկտեմբերի

**Բարձրագոյն անուանական ուկազով իսկական գաղտնի խորհրդական Գօլուբէվին հրամայված է նոյեմբերի 1-ին բանալ Պետական Դումայի նիստը: («Հ. Գ.»)**

Լօնդօն, 30 հոկտեմբերի

**Թէհրանից տեղական լրագիրները տեղեկութիւն են ստացել, որ հոկտեմբերի 28-ին մէջլիսը նախահաշիւը ընդունեց և միջոցներ մատնանշեց՝ դէֆիցիտը ծածկելու համար: Շահի և նրա տան ծախքերի ցուցակը որոշված է 100,000 ֆունտ ստերլինգ: Այսօր Շահը այցելեց մէջլիսին:**
**(«Ռէյտէր»)**

Կ. Պոլիս, 29 հոկտեմբերի

**-Բէյրութում պատահեց խօլերայով կասկածելի հիւանդութեան մի դէպք: («Բ. Թ.»)**

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Երկուշաբթի, ամսիս 29-ին, երեկոյեան ժամը 8-ին քաղաքային դումայի հերթական նիստում քննվելիք ի միջի այլ հարցերի նշանակված էր և քաղաքագլխի ընտրութիւնը, որին էլ հէնց առաջնութիւն արվեց: Նիստը բացելուց յետոյ քաղաքագլխի պաշտօնակատարը հրաւիրեց ձայնաւոր բժ. Մ. Լունկեվիչին նախագահելու, որը դեռ անցեալ նիստում էր ընտրված այդ նպատակի համար և արդէն հաստատվել էր տեղական իշխանութեան կողմից: Նախ քան քաղաքագլխի ընտրութեանը դիմելը, ժողովը բժ. Լունկեվիչի նախագահութեամբ զբաղվեց քաղաքագլխին ռոճիկ որոշելու խնդրով: Այդ խնդրի մասին երկու առաջարկներ կային. առաջինը՝ թողնել նախկին 6000 րուբլի տարեկան ռոճիկը և երկրորդ՝ աւելացնելով մի հազար րուբլի էլ՝ բարձրացնել ռոճիկը 7000 րուբլու: Այդ երկու առաջարկն էլ միաժամանակ գաղտնի քուէարկութեան դրվեցին, և ձայների անհամեմատ մեծամասնութեամբ որոշվեց քաղաքագլխի տարեկան ռոճիկը 7000 րուբլի:

Դրանից յետոյ քաղաքագլխի պաշտօնակատար պ. Չերքեզովը նորից իր տեղը բռնեց, և ժողովը դիմեց քաղաքագլխի ընտրութեանը: Թերթիկներով իշ. Չերքեզովը ստացաւ 49 ձայն, որից յետոյ նրա ընտրութիւնը կասկածից միանգամայն դուրս էր, բայց և այնպէս, օրէնքի տառի դէմ յանցանք չը գործելու համար, դրվեց իշխ. Չերքեզովի տուփը և գաղտնի քուէարկութիւն կատարվեց: Հետևանքը 52 սպիտակ և 9 սև: Ընտրութիւնը ընդունվեց բուռն ծափահարութիւններով:

Նորընտիր քաղաքագլուխը, մի կարճառօտ շնորհակալական ճառ արտասանելուց յետոյ, ժողովին յայտնեց Հայոց Վեհափառ Կաթողիկոսի մահը և առաջարկեց ոտքի կանգնելով յարգել նրա յիշատակը, հարցնելով միևնոյն ժամանակ թէ չէ՞ին ցանկանայ արդեօք պ. պ. ձայնաւորները, որ նիստը փակվի նոյն յարգանքը արտայայտելու նպատակով: Ձայնաւորները միաձայն ընդունեցին այդ առաջարկը, և նիստը փակվեց ժամը 9 1/2-ին:

## ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պետական Խորհրդի վիճակով հետաքրքրվող տեղական շրջանները տարակուսանքի մէջ են Խորհրդի համար կայացած վերջին մասնակի-լրացուցիչ ընտրութիւնների հետևանքով. յայտնի է հեռագիրներից (տես «Մշակ» № 143), որ ընտրութիւններում անցել են երկու ռուս ազնուականներ՝ Ռուսաստանի ներքին նահանգներից, որոնք պէտք է փոխարինեն հանգուցեալ իշխ. Ի. Ճավճավաձէին և հրաժարված լեհացի անդամ պ. Կօրվին-Մալեվսկուն. վերջինս, ի դէպ ասած, Խորհրդի ամենաձախակողմեան և ընդունակ անդամներից էր: Այդպիսով Պետական Խորհրդի ընտրովի անդամների ներկայ կազմում չը կայ այլևս վրացի ազնուականների ներկայացուցիչը. նկատենք այստեղ, որ նշանակովի անդամների մէջ նոյնպէս չը կայ վրացի մարդ:

Դա բոլորովին օրինաւոր է, եթէ յիշենք «Պետական Խորհրդի հիմնարկութեան փոփոխման օրէնքը» (տես Собраніе узак., № 38, 21 փետր. 1906 թ.), որ ի միջի այլոց պարզ որոշում է Խորհրդի ընտրովի անդամների վերաբերեալ կանոնները. նշանակովի անդամների կազմը առաջվայ նման թողնված է Թագաւոր Կայսրի բարեհաճութեանը:

Ընտրովի անդամներ ջոկելու իրաւունքը տուած է և Ռուսաստանի ազնուականութեան, սակայն այն նահանգներում և շրջաններում, որտեղ նրանք կազմակերպված են, ունեն ազնուականների ժողովներ, գաւառական և նահանգական պարագլուխներ, որբերի խնամատարութիւն, մասնաւոր հարկահանութիւն (дворян. обложеніе) և այլ ինքնավարական հիմնարկութիւններ: Այս կազմակերպութիւնը ունի գրեթէ բացառապէս Ռուսաստանի զեմստվօյեան նահանգների ազնուականութիւնը. դա չը կայ Լեհաստանում և Կիեվի գեներալ-նահանգապետութիւնում (ուր այլ կանոններով է կազմակերպված ազնուականութիւնը), Անդրկովկասի հայ և մուսուլման նահանգներում, Սիբիրում, Միջին Ասիայում եայլն:

Կովկասում ազնուականներ են (վրացի, հայ, թուրք եայլն) միայն վրացիները, որ ունեն այդ կազմակերպութիւնը:

Ահա ինչ կերպ են ազնուականները մասնակցում Պետական Խորհրդի անդամների ընտրութեանը: Ամեն մի նահանգի կամ շրջանի ազնուականութիւնը ընտրում է իր միջից երկու-երկու պատուիրակներ, որոնք հաւաքվելով Պետերբուրգում համաժողովի, ընտրում են իրանց միջից 18 անդամ Պետական Խորհրդի համար (յիշած օրէնքի 6-րդ յօդ.): Նոյն կազմը նոյն ձևով կատարում է և անդամների լրացուցիչ ընտրութիւնները, եթէ նախորդ ընտրութիւններից կանդիդատներ չեն մնացել (յօդ. 15-րդ):

Այդպիսով ընտրովի անդամների կազմը ամբողջովին տրված է համառուսական կազմակերպված ազնուականութեան պատուիրակների ժողովին և նրանից է կախված թէ պետութեան ո՞ր կողմից և ինչ ազգից ընտրել իր թեկնածուներին: Դա գերակշռող ռուս ազնուականութեան համար դառնում է վերաբերմունքի հարց:

Եւ այս անգամ այդպէս էլ եղաւ. վախճանված իշխ. Ի. Ճավճավաձէի տեղն անցաւ ո՛չ վրացի, ինչպէս սպասում և կարծում էին ընտրութիւնով հետաքրքրվողները, այլ ներքին Ռուսաստանի ազնուական: Ինչպէս տեսնում էք, դա բոլորովին օրինաւոր է, և գուցէ միայն վկայում է, որ ռուս ազնուականների ներկայացուցիչների վրացիների հետ եղբայրացման (братаніе) շրջանը կորցնելու վրա է իր երէկվայ հմայքը, մի հմայք, որ առաւել բռնկվեց Վրաստանի միացման 100-ամեակին և նոյնիսկ վերջերս շէշտվեց Մօսկվայի ազնուականների նահանգական պարագլուխ իշխ. Պետր Ն. Տրուբեցկօյի ճառում՝ ուղղած «եղբայր» վրացի ներկայացուցիչներին...

Պ. Զաքարեան

Յ. Գ.—Յօդուածս գրված էր կիրակի, նոյեմբերի 28-ին, և մեր ձեռքի տակ չը կային փաստեր՝ Պետերբուրգում կայացած համաժողովին վերաբերեալ: Մեր եզրակացութիւնը գալիս է հաստատելու «Зак.» թերթը իր նոյեմբերի 30-ի համարում, հաղորդելով համաժողովի մանրամասնութիւնները—սկզբունքով ո՛չ հետաքրքիր մեր ընթերցողների համար,—Պետերբուրգի թղթակիցը աւելացնում է. «Ռուս աջակողմեան պատուիրակները պնդում էին թէ՝ վրացի ազնուականութիւնը, որպէս ծայրագաւառեան, պիտի բնիկ զրկվի Պետական խորհրդում ձայն ունենալուց»:

Մեր ենթադրութիւնը ուրեմն միանգամայն ճիշտ էր:

Պ. Զ.

## ՈՎՔԵՐ ԵՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆՆԵՐԸ

Այժմ, երբ ընտրութիւններից յետոյ ակնյայտնի է դառնում, որ Պետական Դումայում ղեկավարող դերը «Հոկտեմբերեան» անունով յայտնի կալուածատիրական-բուրժուազական կուսակցութեանն է պատկանելու, մայրաքաղաքի թերթերը սկսել են այդ կուսակցութիւնը անալիզի ենթարկել՝ պարզելու համար թէ իսկապէս ինչ է ներկայացնում իրանից «հոկտեմբերեանների» կուսակցութիւնը:

Այդ կուսակցութիւնը, ինչպէս յայտնի է, հրապարակ եկաւ, յայտարարելով թէ ինքը ձգտելու է կեանքի մէջ իրականացնել այն բոլոր ազատագրական ռեֆորմները, որոնք խոստացված էին 1905 թւականի հոկտեմբերի 17-ի կայսերական պատմական մանիֆեստով, և այդ պատճառով էլ նա ինքն իրան «Հոկտեմբերեանների կուսակցութիւն» անունը տուեց: Սակայն չէ՞ որ Ռուսաստանի բոլոր դեմոկրատական կուսակցութիւնների ձգտումն ու նպատակն էլ հէնց նոյն խոստումները կեանքի մէջ իրականացնելն էր. կը նշանակէ, այդ հաշւով, բոլոր ձախակողմեան կուսակցութիւններն էլ կատարեալ իրաւունք ունեն իրանց «հոկտեմբերեան» անուանելու:

Բայց, բանն էլ հէնց նրանումն է, որ խոշոր կալուածատէրերի ու խոշոր բուրժուազիայի այդ կուսակցութիւնը, իրան «հոկտեմբերեան» անուանելով հանդերձ, երբեք ձախակողմեան չը դարձաւ ու երբեք չապացուցեց, թէ ինքը յիրաւի անկեղծաբար ձգտում է վերոյիշեալ խոստումները իրականացնել: Ընդհակառակը՝ այդ կուսակցութիւնը իր երևան գալու հէնց առաջին օրից սկսեց քամու աղացքի նման բիւրոկրատիայի բարձունքներից եկած հովերին նայել և շարունակ շարժվել միշտ այն կողմը, ուր որ այդ հովերն էին փչում: Եւ նա այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ, ինչպէս ասացինք, կազմված է խոշոր կալուածատէրերից ու բուրժուազիայից, այսինքն՝ հէնց այն դասակարգերից, որոնց համար բոլորովին ձեռնտու չէ խոստացված ազատութիւնների կատարեալ իրականացումը և որոնց դէմ էր, հետևապէս, ուղղված ժողովրդային շարժումների մեծ մասը: Այդ բանը, ի հարկէ, շատ պարզ էր ամենքի համար հէնց առաջին օրից, ուստի և «հոկտեմբերեան» փքուն անունի տակ թագնված վամպիրների ու տզրուկների այդ կուսակցութիւնը երբեք չը կարողացաւ համակրութիւն գտնել ժողովրդի լայն խաւերից և նա թէ առաջին և թէ երկրորդ Պետական Դումայում մնաց միշտ մի կատարեալ quantité négligeable, մինչև որ բիւրոկրատիան իր ամբողջ հանճարով նրան օգնութեան չը հասաւ և յունիսի 3-ի coup d'état-ով ու այլ մի շարք ծուռումուռ միջոցներով և «բացառութիւններով» միջոց տուեց նրան, վերջապէս, իրանից մի բան ներկայացնելու:

Այդ կուսակցութիւնն է այժմ, որ երրորդ Պետական Դումայում մեծամասնութիւն պիտի կազմէ. նրա վրա է որ պիտի յենվէ բիւրոկրատ մինիստրութիւնը, և նրա միջոցով է որ պիտի վճռվեն պետական ամենակնճռոտ ու ամենակարդինալ հարցերը:

Եւ հէնց այդ հանգամանքի շնորհով է որ հոկտեմբերեանների կուսակցութիւնը ընդհանուրի խօսակցութեան առարկան է դառել այժմ և իր վրա է դարձրել մամուլի ընդհանուր ուշադրութիւնը. ամենքն էլ կամենում են նախօրօք հաշիւ տալ իրանց, թէ ինչ կարող է անել կամ ինչ պիտի անի երրորդ Պետական Դումայում այդ կուսակցութիւնը:

«Ամբողջ դժբաղդութիւնը նրանումն է,—ասում է «Русск. Вѣд.» լրագիրը,—որ մեզանում հոկտեմբերեաններ չը կան: Դա մի առասպելական կուսակցութիւն է, որը իրականութեան մէջ գոյութիւն չունի: Նա հնարված է, որովհետև ժամանակը պահանջում է այդպիսի մի կուսակցութեան կազմվելը: Բայց քանի որ դա մի առասպել է, ուստի նրա դրական գործունէութեան մասին Դումայում լրջօրէն չէ էլ կարելի խօսել:

«Խառնակ ժամանակներում, յեղաշրջումների ու ժողովրդային շարժումների շրջաններում մարդ չափազանց դիւրահաւատ է դառնում և տրամադիր է լինում ամեն մի հրաշքի ու անսովոր բանի հաւատալ: Առասպելներով լիքն են և մեր ներկայ ժամանակները և, գուցէ, այդ առասպելներից ամենահետաքրքրականը ապագայ պատմաբանի համար հէնց այն՝ մարդկանց ուղեղներում խիստ խոր արմատներ գցած՝ առասպելն է, թէ Ռուսաստանում մի այնպիսի քաղաքական կուսակցութիւն գոյութիւն ունի, որը իրան հոկտեմբերի 17-ի միութիւն է անուանում: Որովհետեւ այն, որ այդպիսի կուսակցութիւն իրապէս գոյութիւն չունի, հետզհետէ աւելի ու աւելի պարզ է դառնում: Եւ յիրաւի, կուսակցութիւն ասելով, ամենից առաջ ենթադրվում է, որ նրա անդամներին միմեանց հետ կապող մի յայտնի գաղափար, նրանց բոլորի համար մի ընդհանուր նպատակ՝ կայ: Դեմօկրատիկ-սահմանադրական կարգեր ունենալը կադետների գաղափարն է: Սօցիալիստական պետութիւնը սօց.-դեմօկրատների գաղափարն է: Մինչև իսկ ծայրայեղ աջակողմեաններն էլ իրանց գաղափարը ունեն: Իսկ ինչումն է կայանում հոկտեմբերեանների գաղափարը: Ինչի՞ են նրանք ձգտում: Ի զուր կը լինէր մեզ այս հարցին պատասխան փնտռել:

«Հոկտեմբերի 17-ի միութիւնը Դումայում, ի հարկէ, ոչինչ չի անի, գոնէ նա ոչ մի այնպիսի բան չի անի, որը առանց նրա աջակցութեան չանէր և մինիստրութիւնը: Սակայն, եթէ առասպելական կուսակցութիւնը բանէ պարլամենտի աթոռները, նա արդեօք հէնց պարլամենտում էլ առասպել չի՞ դառնի: Ահա հէնց այդ բանիցն է որ իսկապէս կարելի է վախենալ»:

Ոչ պակաս հետաքրքրական ու սրամիտ կերպով է բնորոշում այդ կուսակցութիւնը հէնց նրա դաշնակից ծայրայեղ աջակողմեանների օրգան արխի-յետադիմական «Мос. Вѣд.» թերթը:

«Դա անկուսակցական թափառականների մի կուսակցութիւն է,—ասում այդ թերթը,—թափառականներ, որոնք չը գիտեն, թէ ուր դնեն իրանց գլուխը: Դա հոգեպէս աղքատների մի կուսակցութիւն է, աղքատներ, որոնք կերակրվում են ուրիշ կուսակցութիւնների ու միութիւնների գաղափարական սեղանի փշրանքներով, բայց և երբեք չեն կշտանում ու միշտ թափառում են անհաշտ հակասութիւնների լաբիրինթում, զարթեցնելով իրանց շրջապատողների մէջ կարեկցութիւն ու արհամարհանք: Նրանք, սպանական վէպի հիդալգօյի նման, թէև մեռնում են քաղցից, բայց և վախենում են գէթ մի խօսքով իրանց թշուառութեան մասին ակնարկել, հպարտ ու անկախ տեսք պահպանելով միշտ:

«Նրանց կուսակցութիւնը կազմված է նախ՝ անգիտակից սև-հարիւրեակներից, որոնք վախեցած են «սահմանադրութիւն» և «առաջադիմութիւն» խօսքերից և որոնք այդ պատճառով էլ վախենում են ծայրայեղ աջակողմեանների կողմը անցնելուց. և երկրորդ՝ թագուն կադետներից, որոնք, վախենալով «յեղափոխութիւն» խօսքից, սիրտ չեն անում ուղղակի ձախ գնալ: Դրանք մեր ժամանակների մշուշի և անորոշութեան ծնունդ են, որ ձգտում են միմեանց հետ անհաշտ բաներ հաշտեցնել: Կը ցրվի մշուշը, կը վերանայ և «հոկտեմբերեանների» վախը, և նրանց մի մասը կը գնայ համարձակ դէպի աջ, իսկ միւս մասն էլ, նոյնպէս համարձակ, դէպի ձախ»:

Այլ խօսքերով, երբ մշուշը վերանայ, հոկտեմբերեան անգիտակից սև-հարիւրեակները կը դառնան գիտակից սև-հարիւրեակներ, իսկ նրանց դաշնակից վախկոտ ձախակողմեաններն էլ կը դառնան իսկական կադետներ:

Եւ այդպիսի ողորմելի տարրերից կազմված ողորմելի զանգուածն է որ այսօր հրապարակ է եկել ու հաւակնութիւն ունի Ռուսաստանի 130 միլիոն բազմաչարչար ու արիւնաքամ ժողովրդի ճակատագիրը անօրինելու...

Խ.-Ազատ

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ԵՐՐՈՐԴ ԴՈՒՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնը վաղուց արդէն ամեն ճիգ գործ է դնում իրերի դրութիւնը պատկերացնելու ընթերցող հասարակութեան առաջ կառավարչական շրջանների համար ցանկալի գոյներով: Վերջին ժամանակներս նա շատ շատ է հաղորդում արտասահմանեան մամուլի կարծիքը երրորդ Դումայի մասին և, եթէ ուշադրութեան առնենք նրանց, պէտք է գանք այն համոզման, որ արտասահմանի հասարակական կարծիքը Ստոլիպինի կառավարութեան կողմն է:

Հէնց այդպիսի դիտումներով էլ ղեկավարվում է գործակալութիւնը, հաղորդելով պահպանողական այն թերթերի կարծիքները, որոնք սակաւ ազդեցիկ լինելով հանդերձ՝ այնուամենայնիւ համակրում են Ստոլիպինի բռնած ընթացքին:

Օրինակ, գերմանական լրագիրներից գործակալութիւնը հաղորդել էր, համարեա, անյայտ «Deutsche Tageszeitung»-ի և բորսային շրջանի «Börsen-Zeitung»-ի կարծիքները, մինչդեռ բոլորովին լռութիւն է պահպանում «Frankfurter Zeitung», «Vossische Zeitung», «Berliner Tageblatt» և այլ այդպիսի լրագիրների կարծիքները, որոնք աւելի են անաչառ և աւելի լաւատեղեակ:

Այդ նպատակով առաջ կը բերենք գոնէ մի լրագրի կարծիքը, որ չափազանց ուշագրաւ է և որի մասին ակնարկ անգամ չէ անում հեռագրական գործակալութիւնը:

Գերմանական լրագիրներից միայն «Frankfurter Zeitung»-ն է, որ յատուկ առաջնորդող է նուիրել երրորդ Դումային:

Հոկտեմբերի 30-ի համարում, թւելով այն բոլոր միջոցները, որոնց շնորհիւ հնարաւոր եղաւ աջակողմեան մեծամասնութիւն կազմել երրորդ Դումայում (լրագիրը հոկտեմբերեաններին օպպօզիցիայի շարքում չէ դասում), լրագիրը հետևեալ գնահատութիւնն է տալիս իրերի դրութեան մասին:

Թէ առաջին և թէ երկրորդ Դումայում ղեկավարող դեր էին խաղում կադետները, որոնք մեծ եռանդով աշխատում էին Դուման դարձնել աշխատանքի ընդունակ և եթէ այդ նրանց չյաջողվեց, ամբողջ մեղաւորութիւնը ծանրանում է նախ և առաջ հէնց իրա կառավարութեան վրա, որը ամենից շատ հոգ էր տանում կադետներին վարկաբեկելու համար: Մասամբ մեղաւոր են և ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւնները, որոնք ուզում էին պարլամենտը ծառայեցնել միայն ագիտացիայի նպատակների համար: Երրորդ Դումայում հոկտեմբերեանները իրանց վրա պիտի վերցնեն այն դերը, որը երկրորդում խաղում էին կադետները: Շատ բան, այդպիսով, կախված կը լինի նրանից, թէ հոկտեմբերեանները կառավարութեանը պաշտպանութիւն ցոյց տալու գործում որքան հեռու կը գնան: Նրանց վերաբերմունքը դէպի Ստոլիպինի մինիստրութիւնը մինչև վերջին ժամանակներս, նոյնպէս և նրանց վերաբերմունքը դէպի իրանցից ձախ կանգնած կուսակցութիւնները չեն կարող վստահելի դարձնել այդ կուսակցութիւնը: Միայն այն դէպքում, եթէ հոկտեմբերեանները ազնիւ և աներկիւղ կերպով միանալու լինեն սահմանադրականների հետ, որոնց թւին են պատկանում կադետները, հնարաւոր է ուժեղ սահմանադրական կենտրոն կազմելու միտքը, որը և կարող կը լինէր աջող կերպով դիմադրութիւն ցոյց տալ թէ ծայրայեղ ձախակողմեաններին և թէ կառավարութեանը: Ուրիշ խօսքերով, միայն այդ դէպքում հնարաւոր կը լինէր Ռուսաստանի մէջ սահմանադրական կազմ մտցնել առանց յեղափոխական ցնցումների:

Հոկտեմբերեանների վարմունքը, կրկնում է լրագիրը, չէ կարող արդարացնել այդ տեսակ յոյսերը, բայց հոկտեմբերեանների կուսակցութեան անպայման հպատակվելը կառավարութեան՝ կարող է լոկ ամրապնդել ժողովրդի մէջ առանց այն էլ զօրեղ տպաւորութիւնը, թէ նոր Պետական Դումայի վրա չէ կարելի նայել իբրև ժողովրդական ներկայացուցչութիւն: Այդ պատճառով կասկածելի է որ մի այդպիսի ժողովրդական ներկայացուցչութեամբ կարելի լինի մտքերը խաղաղեցնել, և թերևս դէպքից ուզենայ օգուտ քաղել կառավարութիւնը և հլու Դումայի աջակցութեամբ օրէնսդրական ճանապարհով իրագործէ քանիցս խոստացված, բայց երբեք չիրագործված ազատութիւնները:

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի օրվայ հայոց ներկայացումը, երբ պէտք է դրվէր Գ. Սունդուկեանի «Բաղնըսի Բօխչա» նոր պիէսը, յետաձգվեց Կաթողիկոսի մահվան պատճառով:

Հայոց Դրամատիկական ընկերութեան մրցանակաբաշխութեան մասնաժողովը, բաղկացած պ.պ. Ս. Քափանակեանից, Հ. Առաքելեանից, Տ. Յովհաննիսեանից և Յ. Սունդուկեանից, իր վերջին նիստում քննելով ներկայացված 8 թատրոնական պիէսներ, մրցանակի արժանի համարեց միայն մինը, այն է Նար-Դոսի «Անտառի Անցքը» դրաման, 4 գործողութեամբ: Որոշված է տալ մրցանակի կէս գումարը—75 ր., որովհետև այդ դրաման փոխադրութիւն է հեղինակի «Սպանված Աղաւնի» վէպիկից:

## ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԱՂԷՏԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Նոր-Բայազէտի գաւառի աղէտեալների օգտին ստացանք Բագուից՝ Գուրգէն Կօլմանեանից (ուսանող առևտրական ուսումնարանի) տասն րուբլի:

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դիլիջան, 25 հոկտեմբերի

Ամսիս 22—23-ի գիշերը սկսեց տեղալ այս տարվայ առաջին ձիւնը, որը անընդհատ տեղում է մինչև այսօր, կէսօրից յետոյ ժամի 2-ը, և դեռ շարունակվում է: Ե՞րբ կը դադարի՝ չը գիտենք, միայն առայժմ, թէև տակից անընդհատ հալվում է, ձիւնի խորութիւնը ճիշտ 1 1/2 արշին է:

Այսպիսի սոսկալի ձիւնի գալը բոլորովին անսպասելի էր, և սոսկալի թշնամին բոլորովին անպատրաստ գտաւ իր զոհերին՝ ժողովրդի աղքատ և միջին դասակարգին: Իսկ ժողովրդի սոյնանման տառապանքները միմիայն քաղցր բաւականութիւն են պատճառում ընչաքաղց վաշխառուներին. կը սկսվի սրանց առատ հունձը: Հացի գինը բարձրացել է. գիւղացիք դեռ ձմեռվայ պաշար չէին պատրաստել, ձիւնը վրա հասաւ և կապեց ամեն ինչ՝ անտառ, դաշտ, ճամբայ. անասունները՝ որը գոմում, որը դուրսը մնաց, սովամահ լինելու վտանգին ենթարկված: Անհալ տեղերը մարդաբոյ կանգնած է ձիւնը, շատերի դռները երկաներին յետ արած են մնացել, մի թիի պատրաստութիւն էլ չէ տեսել, որ ձիւնը ճղի՝ շաւիղ բաց անի գոմը կամ հարևանի տունը գնալու համար: Սոսկալի դրութիւն է ստեղծվել, յուսահատութիւն ամենուրեք: Գիւղը ներկայացնում է մի խորթ ու բորթ հսկայական ձիւնային զանգուած. երևում են միայն երկյարկանի և եռյարկանի տները: Ձիւնը դեռ գալիս է...

Ս. Դաւթեան

Գանձակ, 30 հոկտեմբերի

Երկու օր ու գիշեր անընդհատ թափվող ձիւնը կաթեցրեց բոլոր տները, քանդեց մի երկու խարխուլ պատշգամբներ, կոտրատեց իր ծանրութեամբ թթենու և այլ ծառեր: Թուրքերի այգիների խաղողների մեծ մասը դեռ չէ ժողոված. խաղողի գինը իջաւ փութը 80 կոպ.: Քանի օր առաջ երկաթուղու կայարանում խանութ ունեցող Գրիգորեանցը 1008 րուբլի փող է թագցնում վառելափայտի արանքում. փայտ տանելու ժամանակ 14-ամեայ ծառայի աչքովն է ընկնում կապոցը, որը վերցնելով անհետանում է: Երկար փնտռելուց յետոյ պատանուն գտնում են, որ յանձն է առնում փող վերցնելը, բայց մատնացոյց է անում, որ ուրիշ մարդկանց է տուել:

Սագան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Շաբաթ, հոկտ. 27-ին, կայացաւ քաղաքային վարչութեան և դումայական մատակարարական մասնաժողովի միացեալ նիստը։ Ի նկատի ունենալով որ հացթուխները յայտնել են, թէ իրանք անկարող են նոյեմբերի 1-ից հացը վաճառել գոյութիւն ունեցող սակագնով ալիւրի թանգութեան պատճառով և խնդրում են դարձնել ֆունտը 6 և $5^{1}/_{2}$ կոպէկ 15 օր շարունակ, որոշվեց երեք օր թխել փորձի համար՝ համոզվելու որ յիրաւի հացի ֆունտը արժէ հացթուխների առաջարկված գինը, և թխելուց յետոյ հետևանքի մասին զեկուցել Դումային։

◆ Հինգշաբթի, նոյեմբերի 1-ին, մտադրութիւն կայ կայացնել քաղաքային դումայի յատուկ նիստը և քննել այն հարցը, թէ հնարաւո՞ր է արդեօք Թիֆլիս քաղաքի անունից 200,000 պուդ ալիւր բերել տալ և բաժանել քաղաքիս հացթուխներին իսկական գներով։

◆ Սանիտարական մասնաժողովը կիրակի օրը, հոկտ. 28-ին, քննեց Հալաբարի և Սաղ կոչված մասի իշխանատները, ձորերը, հեղեղատները, և գտաւ շատ պակասութիւններ, որոնց վերացնելու համար մասնաժողովը արդէն միջոցներ է ձեռք առել։

◆ Թիֆլիսի քաղաքագլուխը կազմել է սանիտարական-գործադիր մասնաժողով, որի կազմի մէջ մտնում են քաղաքային վարչութեան անդամները, ոստիկանապետը, քաղաքային բժիշկը, սանիտարական - բժշկական տեսուչը և առանձին հրաւիրված անձինք։ Այս մասնաժողովի առաջին նիստը նշանակված էր երէկ, հոկտ. 30-ին։

◆ Քաղաքային տեխնիկ Օհանջանեանը, ուղարկվելով քաղաքային վարչութեան կողմից, դիտել է Նաւթիս-Ճալա տեղում քաղաքային նաւթային հողաբաժինները, ուր Բագուի նաւթարդիւնաբերող Գասպար Իվ. Տէր-Մարգարեանը հորեր է փորել։ Օհանջանեանի տեղեկութեան համաձայն, հորերը փորված են 466 սաժէն խորութեամբ, նրանցից 27 սաժէնը անցնում է քարքարոտ հողով։ Նաւթ քաշելու աշխատանքները կատարվում են ցերեկով և գիշերով։ 4 դիւյմ հորից դուրս է գալիս ցելսիուսի 15° ջուր ծծմբային հոտով և նաւթի թանձրութեամբ։ Կարծում են, որ քարքարոտ հողից անցնելուց յետոյ կարող են հասնել նաւթաբեր երակի (нефтеносная жила)։

◆ Հոկտեմբերի 27-ին Թիֆլիսի նահանգապետ Լօզին-Լօզինսկու նախագահութեամբ կայացաւ նահանգական սանիտարական-առողջապահական մասնաժողովի առաջին նիստը։ Մասնաժողովը ցանկութիւն յայտնեց կարճ ժամանակամիջոցում կանոնաւորել քաղաքի սանիտարական դրութիւնը և առաջարկել քաղաքագլխին՝ կազմակերպել քաղաքային սանիտարական - գործադիր մասնաժողով, որը պարտադիր կանոններ մշակէ և այդ կանոնները ներկայացնէ նահանգական մասնաժողովի հաստատութեան։ Իսկ քաղաքային մասնաժողովը պէտք է զբաղվէ խոլերայով վարակված տեղերից եկւորների վրա հսկողութիւն սահմանելու խնդրով։

◆ Երկաթուղային ոստիկանութիւնը հոկտ. 28-ին Նաւթլուղ կայարանում գնացքի մէջ ձերբակալել է մի ճանապարհորդի, որի մօտ գտնվել է 2 պուդ 20 ֆունտ վառօդ և 15 արկղիկ ստրիխնին։

◆ Ինչպէս մեզ գրում են, Գանձակում, Երևանում և Բագւում մեծ քանակութեամբ ձիւն է եկել։

◆ Հոկտ. 27-ին նշանակված կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան անդամների տարեկան ընդհանուր ժողովը յետաձգվեց նոյեմբերի 6-ին։ Ժողովի քննութեան խնդիրները լինելու են ընկերութեան վերջին երկու տարվայ գործունէութիւնը, Թիֆլիսի այգեգործական դպրոցի 1908 թւի ելևմուտքը և ուրիշ մի քանի գործեր։

◆ Երէկ, հոկտ. 30-ին, քաղաքային դումայի դահլիճում քաղաքագլխի նախագահութեամբ կայացաւ միս մորթողների և տէրերի խորհրդակցութիւնը։ Թէև մի քանի կէտերի վերաբերութեամբ համաձայնութեան եկան, բայց հարցը վերջնական լուծում չը ստացաւ։ Մորթողները համաձայնեցին աշխատանքի կպչել, նախօրօք ընտրելով մի յատուկ մասնաժողով, որ, բանակցութեան մէջ մտնելով տէրերի հետ, փոխադարձաբար առաջարկված պահանջների նկատմամբ պէտք է վերջնական համաձայնութիւն կնքէ։

◆ Ստացանք Մարիկի «Լէօ Դարայեան» դրամա 1 գործողութեամբ, գինն է 20 կոպէկ։

◆ Ինչպէս հաղորդում է «Бак. Эхо» լրագիրը, «Бакинецъ» շաբաթաթերթի խմբագիր Զինօրիձէն Բագուի քաղաքապետի հրամանով ենթարկվել է 150 րուբլի տուգանքի փաստակար ուղղութեան համար։ Անկարողութեան դէպքում տուգանքը փոխվում է 1 ամիս բանտարկութեան։

◆ Լաշէ կայարանում պոստային գնացքը կողոպտելու գործի առիթով ձերբակալել են կրկին 9 հոգու։

◆ Ինչպէս գրում են «Зак.» լրագրին, «Слово» լրագրի դրամագլխի կէսից աւելին պատկանում է Բագուի նաւթարդիւնաբերող պ. Ղուկասեանին։ «Русь» և «Рѣчь» լրագիրների և «Вѣсы» շաբաթաթերթի ակցիաների մեծ մասը գտնվում է պ. պ. Աբամեանի և Ղուկասեանի ձեռքերում։ Յիշեալ անձինք իրանց դրամագլուխները լրագիրների համար դրել են հանգուցեալ իշխ. Բէհբութեանի միջոցով։ Վերջինիս մահով, յիշեալ կապիտալիստների կապը մայրաքաղաքի մամուլի հետ, ըստ երևոյթին, թուլանում է։

◆ Ինչպէս լսել է «Зак.» լրագիրը, Կովկասի ոստիկանապետի դիւանատան պաշտօնեայ Դ. Գեղամեանը նշանակված է Սուվալկի գեն.-նահ. Ցուրիկովի դիւանապետ։

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 28-ին Վլադիմիրի նահանգի գիւղացի Իվան Պետրովից Նիկօլա Կօնիաշվիլի անունով մի անձն գողանում է «Սմիտ և Վեսօն» սիստեմի ատրճանակը։ Ոստիկանութեան աջողվում է գտնել գողացողին և ատրճանակը յանձնել տիրոջը։

Տիտ.-սով. Արկադի Մօսիէվը յայտնել է ոստիկանութեան, որ հոկտեմբերի 28-ին, երեկոյեան ժամը 9-ին, Վօկզալնի և Ելիսավէտինսկի փողոցների անկիւնում երեք անյայտ անձինք կանգնեցնում են նրան և փող պահանջում, բայց երբ նա մերժում է, նրանք ուժով տանում են նրան մի տան բակը և, հանելով նրա վերարկուն, որի գրպանում լինում է 10 ր., փախչում են։

Հոկտեմբերի 29-ին, Նաւթլուղում, Կօնստանդին Գալստեանի նաւթի խանութն են մտնում հինգ չարագործներ և վերցնելով դրամարկղից 215 ր. անյայտանում են։

Հոկտեմբերի 29-ին, երեկոյեան ժամը 8-ին, Դիդուբէյում, Ելիզավէտինսկի փողոցում, սեփական խանութի մէջ երկու հարազատ եղբայրներ՝ Զաքարէ և Նիկօլայ Դիաչկովների միջև վէճ է ծագում, որի ժամանակ Նիկօլան Զաքարէի վրա կրակում է ատրճանակից և վիրաւորում է նրան պարանոցից։ Երկաթուղային հիւանդանոցում Զաքարէն մեռնում է, իսկ Նիկօլան, կատարելով յանցանքը, անյայտացել է։

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ֆինլանդական ադմինիստրացիան մշակում է մի շարք միջոցներ մամուլի դէմ կռուելու համար։ Առանձին ուշադրութիւն է դարձված արգելելու ռուսերէն, ֆիննական և շվեդական լեզուներով լոյս տեսած այն գրքերի վաճառման վրա, որոնք պարունակում են իրանց մէջ վիրաւորանքներ Նորին Մեծութեան հասցէին։

◆ Հոկտեմբերի 1-ից սկսած մինչև 20-ը Պետերբուրգից աքսոր են ուղարկված զանազան տեղեր մօտ 1400 հոգի քաղաքական յանցաւորներ։ («Рѣчь»)

◆ Տամբովի փաստաբան Շատօվին տեղական գեներալ-նահանգապետի կողմից տուգանք նշանակելու դէպքը վերջացաւ նրանով, որ նահանգական դատարանի նախագահ Ն. Պոմերանցեվը հեռացաւ պաշտօնից։ Երդուեալ-հաւատարմատար Օ. Օ. Գրուզենբերգի ստացած տեղեկութիւնների համաձայն, այդ դէպքը առիթ եղաւ կառավարութեանը աւելի ևս գրգռելու Պոմերանցեվի դէմ, որի շնորհիւ վերջինս անհնարին համարեց ծառայութիւնը շարունակել։ Պոմերանցեվից դժգոհ էր ադմինիստրացիան առաջներում ևս։ Նրա և Վիտեբսկի նահանգապետ Լեվաշեվի միջև թիւրիմացութիւններ ծագեցին մի ժամանակ, որի համար Լեվաշեվին փոխեցին Պետրօզավօդսկ, իսկ Պոմերանցեվին՝ Տամբով։ Տամբովի նախկին նահանգապետ ֆօն-դէր-Լաունիցն էլ մեղադրանք բարդեց Պոմերանցեվի վրա, որ նա իբր թէ թռուցիկներ է տպագրում դատարանի դիւանատանը, որի առիթով կատարված քննութիւնը, սակայն, պարզեց այդ մեղադրանքի անհիմն լինելը։ («Рѣчь»)

◆ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստր Ֆիլոսոֆովի կարգադրութեամբ՝ պրոֆեսոր Լ. Լուտուգինին առաջարկված է հրաժարական տալ։ Պատճառը համարվում է այն, որ նրա թեկնածութիւնը դրված է եղել իբրև Պետական Դումայի անդամ ձախակողմեան բլօկի ցուցակում, ինչպէս և նրա՝ ընտրողական ժողովներից մէկում արտասանած ճառի բովանդակութիւնը։ «Рѣчь» լրագրի ասելով, Լուտուգինը մերժել է հրաժարական տալու առաջարկը։ Դրանով խնդիրը, ի հարկէ, չի փակվի, և նրան կարձակեն հակառակ իր կամքի։

◆ Բերդեանսկում ծագած անկարգութիւնների շնորհիւ, յուզումներ տեղի ունեցան Տաւրիկեան նահանգի միւս մասերում ևս։ Մեծ Տօկմակում բանւորները արգելում են բեռների և նիւթերի փոխադրութիւնը Ֆուկսի գործարանը։ Բերդեանսկից պահակախումբ է ուղարկված այնտեղ։ Կալանաւորված են պարագլուխները։ Յուզումները շարունակվում են։ («Рѣчь»)

◆ Սարատովի նահանգական ազնուականութեան ժողովը յատկացրել է տեղական իսկական ռուս մարդկանց օրգան «Վօլգա» լրագրին 18,000 րուբլի նպաստ։

◆ Նոյեմբերի 4-ին Կիէվում հրաւիրվում է Կիէվի, Վօլինի և Պօդոլի նահանգների ալիւրաղացների արդիւնաբերութեան ներկայացուցիչների երկրորդ ժողովը։ Ժողովը հրաւիրվում է Կիէվի ալիւրաղացների շրջանային կոմիտետի նախաձեռնութեամբ։

◆ Վիլնայում դպրոցական վկայականների և ատեստատների կեղծման մասին կատարած քննութիւնը, «Р. Сл.» լրագրի ասելով, երևան է հանել մի ամբողջ կազմակերպութիւն, որը, գեղագրութեան ուսուցիչ Նօվիցկու ղեկավարութեամբ, զբաղված էր այդ գործով։ Նօվիցկին այժմ կալանաւորված է։ Պատասխանատուութեան են ենթարկվում մօտ 200 հոգի, որոնցից ոմանք ծառայում են հասարակական հաստատութիւնների մէջ, ոմանք համալսարանի ուսուցիչներ են, և, բացի դրանցից, երեքը օկօլօդօչնիներ են և մի հատ էլ պրիստաւ, որոնց մօտ գտնվել են ուրիշ կեղծ դոկումենտներ ևս։ «Р. В.» լրագրի ասելով, այդ ոստիկանական պաշտօնեաները հեռացված են պաշտօնից։

◆ Հոկտեմբերի 20-ին Պետերբուրգից ուղևորվել է Գերմանիա գերմանական նախկին դեսպան ֆօն Շէնը։ Ինչպէս ասում է «У. Р.» լրագիրը, նա Վիլհելմ կայսրի հեռագրով կանչված է Բերլին՝ ուղեկցելու նրան Լօնդօն, որովհետև վերջնականապէս արդէն վճռված է, որ իշխան Բիւլովը չի ուղեկցի կայսրին։ Կայսրը ցանկութիւն է յայտնել, որ իրան ուղեկցի ֆօն Շէնը, որովհետև վերջինս անձամբ լաւ յարաբերութիւններ ունի անգլիական ներկայ արտաքին գործերի մինիստր սէր Հարդինգի հետ։

◆ Կանանց իրաւահաւասարութեան համար մարտնչողները կարող են իրանց «յիշատակարանի» մէջ մտցնել մի արժէքաւոր փաստ ևս կանանց առաջադիմական քայլերի մասին այդ հարցում։ Լվօվում, «У. Р.» լրագրի ասելով, մօտ օրերս մենամարտ է տեղի ունեցել Կարօ և Ելլինեկ ֆիրմաներում ծառայող երկու գրասենեակապետուհիների միջև մահվան հետևանքով և ճիշտ այնպէս, ինչպէս տղամարդիկ են վարվում։ Պատճառը սիրային ատառ ունի, բայց այդ ատառը զուտ կանացի է։ Երկու աղջիկներն էլ, իրարից անտեղեակ, մտերիմ էին մի կապիտանի հետ։ Թէ մէկին և թէ միւսին կապիտանը խոստանում էր իրանց մտերմութիւնը վարձատրել օրինական ամուսնութեամբ։ Սակայն կապիտանի դաւաճանութիւնը պատահաբար բացվում է, և աղջիկներից իւրաքանչիւրը միւսին է համարում իր օրինական ընտանեկան երջանկութեան միակ խոչընդոտը։ Բացատրութիւններն այն տեղը հասցրին, որ օրինական ամուսնու մասին յարուցված անլուծելի վէճը հարկ եղաւ լուծել մենամարտով միայն։ Եւ լաւ էլ լուծեցին. մէկը այժմ վիրաւորված է, իսկ միւսը գլխից գնդակահարված և իսկոյն մահացած։

◆ Գրինգմուտի այրին Ստոլիպինից ստացել է այս գրութիւնը. «Թագաւոր Կայսրը, Ֆինլանդական ծովախորշում տեղեկանալով ձեր ամուսնու մահվան մասին, բարձրագոյն հրամայեց ինձ յայտնել ձեզ Նրա՝ Կայսրի անկեղծ ցաւակցութիւնը այն մարդու կորուստի համար, որ այնքան ազնիւ և քաջարի մարտիկ էր Ռուսաստանի պատուի և հզօրութեան համար»։

## Ո՞ՐՏԵՂ Է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ *)

(Նամակ խմբագրութեան)

Մի՞թէ ուրեմն 9 օգոստոսի յայտարարութեան այս պարզ խօսքերից յետոյ կարելի է սպասել և յոյս ունենալ, որ պ. Կիրակոսեանը մեզ պէտք է 500 դեսեատին հող ոռոգելու ջուր տայ արդէն ստացած գումարով. չէ՞ որ վանքի աղքատիկ գանձարանից 40 հազար րուբլի ծախսող ինժեներն իր առաջին յայտարարութիւնով խոստանում է մօտ 500 դես. ոռոգելու ջուր տալ, իսկ երկրորդ յայտարարութեամբ պարզ ասում է, որ հազիւ կարելի է մի փոքր մասը՝ մօտ 200 դեսեատին ոռոգել, թէև 3 դեսեատին էլ չէ կարողանում ջրել։ Պ. Կիրակոսեան իր նամակի մէջ զանազան ենթադրական հաշիւներ է անում, թէ լճի օգնութեամբ իր խոստացած քանակութեամբ ջուրը կը տայ, ի նկատի առնելով որ իւրաքանչիւր ջրհան մեքենան արտահանելով մէկ ժամում 10,000 վեդրօ ջուր կամ 50 խոր. ս. ջուր, չորսը միասին բանեցնելով օրեկան միայն 14 ժամ, երկու ամսում կարելի է լցնել և դատարկել լիճը 8,4 անգամ և ոռոգել $50 \times 8,4 = 420$ դեսեատին. սրանք գեղեցիկ հաշիւներ են միայն ուրիշներին մոլորեցնելու համար. բայց արդեօք մինչև այժմ նա տուե՞լ է 10,000 վեդրօ ջուր մէկ ժամում իւրաքանչիւր ջրհան մեքենայով և այդ ո՞րտեղից, քանի որ յոյսը կտրել է հորերից և մտածում է Սև-ջուր գետից վերստին տասնեակ հազարներ ստանալով փորձեր անել ջուր բերելու. բայց այստեղ պէտք է ասել. եթէ պ. Կիրակոսեանի որկորը Շարայի որկորն է, մեր ամբարները Շիրակայ ամբարները չեն։ Եթէ այդպէս չէ և պ. Կիրակոսեանը խոստանում է անպայման 500 դես. ոռոգելու ջուր տալ, թող բարոյական և քաղաքացիական քաջութիւն ունենայ նոտարական ճանապարհով ապահովել սինոդին, որ իր ծախսած 90 հազարի դիմաց անպայման կը տայ հետևեալ տարին մօտ 500 դես. ոռոգելու ջուր։ Ինչո՞ւ պէտք է Կիրակոսեանը օգտվի այն հանգամանքից, որ նոտարական պայման չունի կապած սինոդի հետ իր պարտաւորութեանց նկատմամբ. չէ՞ որ կայ խղճի և բարոյականութեան օրէնք, որի առաջ պիտի խոնարհվի իւրաքանչիւր բարեկիրթ մարդ. չէ՞ որ Էջմիածինը վստահութիւն է տածել դէպի պ. Կիրակոսեանի ըստ երևոյթին հեղինակաւոր անձնաւորութիւնը, թէև իմ կարծիքով այդպիսի բան չը պէտք է լինէր այնտեղ, որտեղ ծանր պատասխանատուութեան գործ կայ։

Պ. Կիրակոսեանն ասում է. «Ես եկել եմ ոչ թէ կապալառու, այլ սինոդի ցանկութեամբ եկել եմ իրագործելու նրա ծրագիրը, նուիրելու այդ գործերին իմ ժամանակը և իմ աշխատանքը բոլորովին ձրի»։ Նախ սինոդը ծրագիր չէ ունեցել, այլ ինքն է առաջարկել ծրագիր և խոստացել կատարել այդ ծրագիրը. իսկ ինչ վերաբերում է ձրի աշխատելուն, այդ կերևայ, երբ մասնագէտների ձեռքով կը քննվեն նրա գնած մեքենաները, երևան կը գան նրանց իսկական արժէքը և պայմանների մանրամասնութիւնը, որ ինքը պ. Կիրակոսեանն ունեցել է գործարանների հետ, երբ կը պարզվի թէ ինքը մեզանից ստացած կանխիկ տասնեակ հազարները արդեօք նոյնպէս կանխի՞կ յանձնել է մեքենատիրոջ, թէ արդեօք ո՞րչափ % զեղչ է ստացել գործարանից, թէ արդեօք իր մեքենանե՞րն է եդել, թէ՞ ուրիշներիցն է վերցրել. ահա այն ժամանակ կասենք, թէ որքան ձրի և բարեխիղճ է կատարել իր գործը։ Իր նամակի մէջ պ. Կիրակոսեանը ասում է, որ ջրաբաշխական գործի համար ծախսվելու է միայն 17,000 րուբլի, որից 6000-ը դեռ չէ ստացել, ինչպէս ասում է։ Մայր Աթոռի ելևմտից մատեանից երևում է, որ պ. Կիրակոսեանը ստացել է ինքը և նոյնպէս Ղևոնդ վարդապետի միջոցով 1906 թ. յունիսի 30-ից մինչև ներկայ տարվայ յունվարի 21-ը 31,529 րուբլի 86 կոպէկ, իսկ այնուհետև մինչև օգոստոսի վերջը 2950 ր.—ընդամենը 34,479 րուբլի 86 կ., և դեռ պահանջում է 6000 րուբլի։ Կրկին ես ասում եմ, որ այդ ամբողջ գումարը սինոդը յանձն է առել ծախսել միայն և միայն նպատակ ունենալով 500 դես. ոռոգելու ջուր ստանալ։ Այդ է ասում սինոդի անցեալ տարվայ 24 մայիսի օրագիրը, այդ է ասում մի ամիս առաջ իրան պ. Կիրակոսեանին սինոդից բոլոր անդամների վճռով գրված պաշտօնական թուղթը։ Այդ թղթի մէջ ասված է, որ թէև Էջմիածինը մինչև այժմ ստացել է էլեքտրական լուսաւորութիւն, բայց դա երկրորդական կարիք է, սինոդի համար էականն և գլխաւորը 500 դեսեատին ոռոգելու ջուրն է, որ մինչև այժմ չը ստանալով՝ տալիս է մի ամիս ժամանակ բաւարարելու իրան ջուր տալու խնդրի նկատմամբ։ Սինոդի այս կտրական թղթին պ. Կիրակոսեանը, ինչպէս երևում է իր նամակից, պատասխանում է. «Առաջարկել եմ սինոդին համաձայն 24 մայիսի օրագրական վճռի կամ տալ մաս առ մաս մնացեալ 6000 րուբլին, որպէսզի ջրհանների գործն աւարտեմ, կամ թէ նոտարական պայմանով ինձ ապահովեցնել, որ ջրհանների գործի աւարտումից յետոյ ես կարողանամ ստանալ սինոդից այդ փողը»։ Նախ մեր պահանջմամբ սինոդում պ. Կիրակոսեանը միւս անդամների ներկայութեամբ յանձն է առել, որ մնայ այդ թէական 6000 րուբլին, որ երբ ինքը ջուր տալու խնդիրը դրականապէս կը վերջացնի, միայն այդ ժամանակ կը ստանայ մնացեալ գումարը. եթէ ուզում է, որ սինոդը նոտարական պայմանով ապահովեցնի իրան 6000 րուբլու համար, ինչո՞ւ ինքը չէ ուզում սինոդին ապահովեցնել 500 դես. ոռոգելու ջրի համար։ Կարծում եմ՝ սինոդը ուրախութեամբ նրան կապահովեցնի նոտարական պայմանով 6 հազար րուբլի տալու համար, եթէ ինքը ամբողջ ծախսած 40 հազարի համար ապահովեցնի, որ կը տայ խոստացած քանակութեամբ ջուրը, հակառակ դէպքում պարտաւոր է վերցնել իր բերած բոլոր մեքենաները և վերադարձնել վանքի 40 հազար րուբլին։ Ահա այս կարևոր հարցերը կը պարզվեն այն ժամանակ, երբ մասնագէտներից բաղկացած մի միջնորդ դատարան սինոդի յանձնարարութեամբ կը քննի և երևան կը հանի, թէ ո՞րտեղ է ճշմարտութիւնը։ Ինքը պ. Կիրակոսեանն էլ պէտք է պահանջի այդ, որովհետև այդ է պահանջում իր բարոյական շահը։ Ինքս անձամբ ոչ մի բան չունեմ պ. Կիրակոսեանի հետ. խնդիրը հասարակական բնոյթ ունեցող լուրջ խնդիր է, որին պէտք է մօտենալ սառն և առանց կրքի, մինչդեռ հակառակն է արել պ. Կիրակոսեանը իր «Մշակի» և «Հովիւի» մէջ տպագրած նամակներում։

Բարգէն վարդապետ

Թիֆլիս, 26 հոկտեմբերի

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱԱԳԱՅԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԱՐԴԻՒՆՔԸ

Յունիսի 15-ին բացված միջազգային կօնֆերենցիան փակվեց հոկտեմբերի 18-ին, նոր տոմարով։ Այդպիսով նրա զբաղմունքները շարունակվում էին չորս ամսից աւելի, որի ընթացքում յարուցվեցին շատ հարցեր, որոնք անուղղակի և ուղղակի կապ ունէին կօնֆերենցիայի հիմնական խնդրի, այն է՝ միջազգային խաղաղութեան զարգացման և ամրապնդման հետ։

Ո՞րպիսի հետևանքներ ունէին այժմեան կօնֆերենցիայի երկար զբաղմունքները, որին ներկայ էին 239 պատուիրակներ, որոնք ներկայացնում էին 42 մեծ և փոքր պետութիւնների շահերը։ Արդեօք նպաստեցին նրանք վերոյիշեալ հիմնական խնդրի որևէ կերպ լուծվելուն։

Այդ հարցին ստիպված ենք բացասական պատասխան տալ միայն։ Մինչև անգամ խաղաղութեան կօնֆերենցիայի, որպէս մշտական հիմնարկութեան, ամենաջերմ երկրպագուներն անգամ ստիպված էին խոստովանելու, որ չափազանց աննշան են ստացված արդիւնքները։ Նրանք չեն ծածկում, որ իրանք յուսախաբ են եղած, որ կօնֆերենցիան, փոխանակ խաղաղութեան հարցով զբաղվելու, իր ամբողջ ուշադրութիւնը նուիրեց պատերազմի հարցերին։

Արդեօք այդպիսի անասելի հետևանքը պայմանաւորված էր այն հրահանգներով, որ իւրաքանչիւր պետութիւն տուել էր իր լիազօրին, կամ թէ նրա պատճառն այն էր, որ լիազօրները անպատրաստ էին լուծելու այնպիսի հարցեր, որոնց մէջ խառն են միջազգային համերաշխութեան սկզբունքները, բայց արդիւնքը այն է, որ խաղաղութեան քայլը ոչ մի նշանակէտ առաջ չը գնաց, չը նայելով բազմաթիւ յանձնաժողովներին և ենթայանձնաժողովներին, որոնք բաժանել էին իրանց մէջ կօնֆերենցիայի աշխատանքը։

Մեր առաջն է այն տրամադրութեան լուսանկարը, որ տիրում էր պատուիրակների մէջ նրանց «հաագային նստաշրջանի» ժամանակ։ Առաջին կօնֆերենցիան որոշեց, որ արգելվում է ռումբեր և պայթուցիկ նիւթեր արձակելը օդապարիկներից։ Այժմ պէտք էր այդ որոշումը նորից հաստատել։ Սակայն երկրորդ կօնֆերենցիան քաջութիւն չունեցաւ հետևելու առաջինի օրինակին և արգելման դէմ խօսեց։ Անգլիայի ներկայացուցիչ՝ Էդուարդ Ֆրա՝ ի զուր էր համոզում պատուիրակներին, որ միջեղային կռուի նպատակների համար կատարելապէս բաւ են պատերազմի երկու տեսակները, ցամաքային և ծովային, և կարիք չը կայ էլի երրորդ տեսակը, օդային պատերազմն աւելացնել։ «Խաղաղութեան» հարցերը քննելու համար հրաւիրված պատուիրակների շրջանում սակաւ չէին զինուորական տեխնիկներ, որոնք Պէրսիվալի, Ցէպպելինի և այլոց նորերս կատարած փորձերից մեծ հետևանքներ են սպասում։ Այդ տեխնիկները պաշտպան էին նոր մահաբեր գործիքի։ Մեծ դժուարութեամբ աջողվեց նրանց համաձայնութիւնն առնել միայն այն բանի համար, որ օդապարիկներից ռմբակոծութեան չենթարկվեն բաց, անպաշտպան տեղերը։

Իսկապէս փակված կօնֆերենցիայում ի նկատի ունէին երկու գլխաւոր հարցեր՝ զինուորութիւնը սահմանափակելու և մշտական պարտաւորիչ միջազգային միջնորդ դատարան հիմնելու հարցերը։

Եւ այդ երկու հարցերի վերաբերմամբ էլ համաձայնութիւն չը կայացաւ։ Զինուորութիւնը սահմանափակելու մասին անգլիական առաջարկութեան առաջին հերթին դրված ընթերցանութիւնը օրից օր յետաձգվում էր այն պատճառով, որ մի քանի մեծ պետութիւններ (Ռուսաստանը, Գերմանիան) առաջուց «սառն» էին վերաբերվում նրան։ Բանակցութիւններ էին վարվում Անգլիայի ներկայացուցչի հետ ընտրելու մի աւելի անմեղ ձև մի այդքան սուր առաջարկութիւն մտցնելու համար։ Բանակցութիւնների վերջում Ֆրա կարդաց անգլիական կառավարութեան դեկլարացիան, որի մէջ խորհուրդ է տրվում «ուսումնասիրել» հարցը և գտնել միջոցներ, որոնք ապահովէին զինաթափութեան գաղափարի աստիճանաբար իրագործումը։ Ֆրայի յայտարարութիւնից յետոյ ոչ մէկը խօսք չը ստացաւ, ոչ մէկ վիճաբանութիւն չեղաւ այդ առիթով։ Կօնֆերենցիան ընդունեց «ի գիտութիւն» այդ յայտարարութիւնը։

Նոյնանման վիճակ ունեցաւ միջազգային միջնորդ դատարան հիմնելու առաջարկութիւնը, որ արել էր Միացեալ-Նահանգների կառավարութիւնը։ Ոչ միայն նրա պարտաւորեցուցիչ լինելը մերժվեց, այլ և այդպիսի դատարանի մշտական գործունէութիւնը չընդունվեց այն պատճառով, որ իբր թէ դատաւորների նշանակելու եղանակը միաձայն համակրութեան չարժանացաւ։ Այդպիսով սրանից յետոյ ևս, գոնէ մինչև 1915 թւը, երբ կը գումարվի երրորդ կօնֆերենցիան, այդ դատարանը կը կազմվի պատահաբար, այն դէպքերում, եթէ այդ կը ցանկանան մրցութեան մէջ ընդհարվող պետութիւնները։ Ոչ նրա կազմը, ոչ էլ նրա կոմպետենցիան նախատեսված չեն։

Բացի այդ հիմնական հարցերից, որոնք երևան եկան որպէս փորձաքարեր «խաղաղ» հաւատացումների, որ շռայլում էին պատուիրակները, կային աւելի ևս ժամագիտական հարցեր, որոնց յարուցումը միայնակ երևան էր հանում, թէ որքան հեռու էին «զինուորական տեխնիկները» մինիմումի հասցնելու ցանկութիւնից պատերազմի փաստակար կողմերը։

Առաջարկութիւն էր արված չոչնչացնել գերված նաւերը, բայց նա մերժվեց։ Առաջարկութիւն էր արված կազմել կօնտրաբանդա համարվող առարկաների ցուցակը, որպէսզի պատերազմող կողմերին հնարաւորութիւն չը տրվի կօնտրաբանդա յայտարարել օրինակ ածուխը, հացը. այդ առաջարկութիւնն ևս մերժվեց։ Առաջարկութիւն էր արված արգելել ականներ գցելը բաց ծովերում կամ գոնէ պարզ կերպով որոշել այն շրջանը, ուր այդ բանը թոյլատրվում է։ Նոյնպիսի որոշ ձևով մերժվեց առաջարկութիւնը, իսկ ընդունվեց ընդարձակ բացատրութիւն թոյլատրող ձևակերպութիւն։

Բաւական է թւել մի քանի կէտեր, որոնց վերաբերմամբ կօնֆերենցիայում համաձայնութեան եկան, ըստ արժանոյն գնահատելու համար նրա հետևանքները։ Մի պայմանագրի համաձայն, պատերազմող կողմի նաւը չէ կարող 24 ժամից աւելի մնալ չէզոք նաւահանգստի մէջ ածուխի պաշար վերցնելու համար։ Մի ուրիշ պայմանագրի

---

*) Տես «Մշակ» № 144.

համաձայն, արգելվում է բաց նաւահանգիստների ռմբակոծութիւնը: Անձեռնմխելի է համարվում պօստը գերի բռնված նաւերի վրա, իսկ նաւը գերի վերցնող կողմը պարտաւորվում է «հնարաւորութեան չափ շուտով» հոգ տանել ուղարկելու նաւը բուն պատկանելոյն: Ժընեւի պայմանագրի պայմանները, որոնք վերաբերվում են ցամաքային պատերազմին, տարածվում են և ծովային պատերազմի վրա:

Հարկաւոր է, յիրաւի, ընդգծել մի կէտ, որով հասած համաձայնութիւնը աչքի է ընկնում իր յարաբերական լրջութեամբ: Դա գրաւման (պրիզային) դատարանի վերաբերեալ հարցն է: Մինչև այժմ այն հարցը, թէ կարելի՞ են նաւը կամ նաւի մէջ եղած ապրանքները յափշտակող կողմի աւար (պրիզ) համարվել, վճռում է այն դատարանը, որ հիմնում է այդ նպատակով շահագրգռված պետութիւնը: Կարելի՞ է արդեօք յոյս դնել մի այդպիսի դատարանի անկողմնապահութեան վրա—ինքն իրան պարզ է: Փակված կօնֆերէնցիայի ընդունած պայմանագրի համաձայն, այդ դատարանը սրանից յետոյ միջազգային բնաւորութիւն կունենայ: Նա մշտապէս կը գործէ և կազմված կը լինի ութ մեծ պետութիւնների—Աւստրիայի, Ամերիկայի, Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Եապոնիայի ներկայացուցիչներից բայց միջին և մանր պետութիւնների ներկայացուցիչներից, որոնք հերթով կը մասնակցեն նիստին: Այդ պայմանագիրը յիրաւի կազմում է կօնֆերէնցիայի առաջին իրաւաչափ պտուղը, բայց նա կազմում է միևնոյն ժամանակ և նրա միակ պտուղը: Կօնֆերէնցիային մասնակցողները, նոյնպէս դէպի կօնֆերէն. լաւ տրամադրված մամուլը հպարտութեամբ մատնացոյց են անում այդ պայմանագրի վրա, որպէս ապացոյց այն բանի, որ «Նիստը» այնուամենայնիւ ի զուր չէ անցել: Բայց չը պէտք է մոռանալ, որ այդ պայմանագիրը կատարելապէս ոչինչ կապ չունի միջազգային «խաղաղութեան» հետ:

Եզրափակելով վերև ասածները, չէ կարելի չը գալ այն եզրակացութեան, որ արդիւնքները չեն համապատասխանում սպասելիքներին: Կօնֆերէնցիան գումարվելու ժամանակ Եւրոպան լարված ուշադրութեամբ հետևում էր նրան, իսկ երբ նա ցրվում է, նոյն Եւրոպան սառն անտարբերութեամբ է նայում նրան: («T.»)

## ԱՀԱԼԻ ՀԱՐՑ

(Թիւրք-պարսկական վէճը)

II

Այստեղ մենք անցնում ենք հարցի երկրորդ մասին, Պարսկաստանի և Թիւրքիայի փոխադարձ յարաբերութիւններին:

Անցքերի տեսութիւնը մեզ իսկոյն ցոյց կը տայ, որ մենք գործ չունենք նրա հետ, որ սովորաբար հասկացվում է «սահմանագծային վէճ», կամ անգամ տէրրիտօրիայի գրաւումը «խօսքերի տակ, այլ ուրիշ նշանակութիւն» ունեցող փաստերի հետ, որ բացառապէս պայմանաւորված են տեղական բնակիչների գործողութիւններով և միայն անուղղակի կերպով՝ կառավարութիւնների արած քայլերով:

Սահմանագծային վէճեր և առաջ են տեղի ունեցել Պարսկաստանի և Թիւրքիայի միջև: Այսպէս օրինակ, 1847 թւին բռնկվեց մի այնպիսի սուր վէճ, որ պահանջեց շահագրգռված պետութիւնների միջամտութիւնը, Ռուսաստանի և Անգլիայի, որպէսզի խանգարվի նրա յետագայ զարգացումը: Սահմանագծային յանձնաժողովը ռուս և անգլիական միջնորդների մասնակցութեամբ միայն 1852 թ. որոշեց Թիւրք-պարսկական սահմանը: Բայց Թիւրքիան այդ յանձնաժողովի վճիռը չէր ընդունում մինչև 1878 թ. Բերլինի վեհաժողովը, երբ նա ստիպված էր Պարսկաստանին յանձնել և Խոտուրի շրջանը: Կարելի է ենթադրել, ի հարկէ, որ Բարձր Դուռը պահպանել է յայտնի ոխ և դա դեր է խաղացել ներկայ «սահմանագծային վէճում», բայց ինչպէս մենք կը տեսնենք, այդ շարժառիթը կարող էր խաղալ միայն երկրորդական դեր: Անցնենք «վէճի» պատմութեան:

Ատրպատականի հիւսիս-արեւելեան ծայրի անկիւնում գտնվում է փոքրիկ կիսանկախ տիրապետութիւն, Մակուի խանութիւնը, որը հիւսիսից սահման ունի մեր Երևանեան նահանգը, իսկ արեւմուտքից Վանի սանջակը: Ազատագրական շարժումը, որ ընդգրկել է ամբողջ Պարսկաստանը, առանձին ուժգնութեամբ արտայայտվեց Մակուի խանութեան մէջ. դա մեծ չափով բացատրվում է նրա հարևանութեամբը Անդրկովկասի հետ: Յայտնի է, թէ ինչ ազդեցութիւն ունէր մասսաների տրամադրութեան վրա ռուս ազատագրական շարժման զարգացումը, որից ազատ չը մնաց և Պարսկաստանը:

Այս տարվայ գարնանը Մակուի խանութեան ազգաբնակութիւնը, յեղափոխական տրամադրութեան տակ, ապստամբվեց, հեռացրեց խանին, կամ ուղիղն ասած՝ ժառանգական նահանգապետին, և իշխանութիւնը յանձնեց նրա բարեկամներից մէկին, որը կողմնակից էր ազատագրական շարժման: Խանի դէմ ապստամբութիւնը կողմնակից գտաւ Թաւրիզի և Ուրմիայի անջումաններին, որոնք կենտրոնական կառավարութեան կազմալոյծ դրութեան պատճառով, իրապէս իրանց ձեռքում ունէին իշխանութեան ղեկը: Հեռացված խանը, որը զրկվել էր իր դէմ ազգաբնակչութիւնը կեղեքումներով և անսահման բռնակալութիւնով, փախաւ Երևանեան նահանգը, մի քանի ժամանակ ձգտում էր խանութեան մէջ կազմակերպել հակայեղափոխութիւն՝ յատուկ ուղարկված մարդկանց միջոցով, և երբ պարզվեց այդ նախագծի անկարելիութիւնը, հեռացաւ Թիւրքական Քիւրդիստանը, ոտքի կանգնեցրեց մի քանի աւազակաբարոյ քիւրդական ցեղեր և ասպատակեց նրանց հետ Պարսկաստանի սահմանները, այն է Ուրմիայի շրջանում իր խանութիւնը: Թէ ինչ դեր կատարեցին Թիւրքական իշխանութիւնները այս նախնական շրջանում, անյայտ է: Միայն հաւաստի յայտնի է, որ երբ երկու շաբաթվայ պաշարումից յետոյ հեռացված խան Իգբալ Սօլթանէն տիրապետեց Մակուին (դա եղաւ օգոստոսի վերջին), այն ժամանակ Թիւրքական իշխանութիւնը սկսեց իր գործողութիւնները երկու ուղղութեամբ: Առաջին, սեպտեմբերի սկզբին Թիւրք կանոնաւոր զօրքերը գրաւեցին սահմանագծային դիրք ունեցող Ուշնուը և առաջ խաղացին դէպի Դիլման, Ուրմիայի ուղղութեամբ: Ուշնույում նշանակվեց Թիւրքական գայմագամ: Միւս կողմից, միևնոյն ժամանակամիջոցում, Թիւրքական Քիւրդիստանում և Հայաստանում սկսվեցին կատարվել անցքեր, որոնք յիշեցնում էին 1894 թւի հայկական կոտորածների նախորդ ամիսները: Սակաւաթիւ Թիւրք զօրքի հանդէպ ուղարկվեցին աւելի սակաւաթիւ պարսկական զօրքեր: Թիւրքերը կամաց առաջ էին գնում, իսկ պարսիկները նրանց կանգնեցնել չէին կարողանում: Ահա Թիւրքական կառավարութեան գործողութիւնները: Այս բոլորը իմանալուց յետոյ տարօրինակ չէ մեր Խոյից նամակագրի բացատրութիւնը: Նա գրում է՝ որ «Տաճկաստանը կռւում է յեղափոխութեան հետ իր սահմաններում: Իգբալ-Սօլթանէի երևալը և նրա գործողութիւնը քիւրդերի մէջ ձգեցին առաջին կայծը, որ Թիւրքական իշխանութիւնը աշխատեց բռնկեցնել: Կանոնաւոր զօրքերի շարժումը դէպի Ուրմիա բացատրվում է Ուրմիան և Խոյը գրաւելու ցանկութիւնով, որովհետև այդ նահանգները հայկական յեղափոխութեան կենտրոնն են կազմում: Այդպիսով Թիւրքական իշխանութիւնը յոյս ունի ոչնչացնել յեղափոխութիւնը այնտեղ, որտեղից նա, նրա կարծիքով, տարածվում է և սահմանի միւս կողմը»:

Ինչպէս այստեղից երևաց, մենք գործ ունենք այստեղ ոչ հասարակ «սահմանագծային վէճի» հետ:

Տեղական հայ և պարսիկ ազգաբնակութիւնը ցոյց տուեց ամենաեռանդուն գործունէութիւն: Կազմակերպվեցին կամաւորների խմբեր, որ օգնեն կանոնաւոր զօրքերին, որոնք կենտրոնացել էին Կարագիադին գիւղում, Խոյի և Մակուի խանութեան մէջտեղը: Միւս կողմից Թաւրիզի անջումանից ուղարկված պատգամաւորութիւնը բանակցութիւն սկսեց Իգբալ-Սօլթանէի հետ՝ պահանջելով յետ ուղարկել Թիւրքական քիւրդերին և աւերված գիւղերին վարձատրութիւն տալ: Բայց երբ պատգամաւորները (մեր թղթակիցը անուանում է նրանց «շահզադաներ») Կարագիադինից անցան Մակուի խանութիւնը, նրանց այնպէս դիմաւորեցին, որ բանակցութիւններն ընդհատվեցին: Շուտով բեմ դուրս եկան և պարսկական քիւրդերը: Քիւրդական աշիրաթ ցեղը իջաւ սարերից և Ջօրավայի մօտերքում բոլորովին ջարդեց կանոնաւոր զօրքին և կամաւորներին: Վերջինների ղեկավար Միրզա-Ջաֆարը, մի ինտելիգենտ մարդ, որ ուսումը ստացել է Ռուսաստանում, գերի վերցվեց: Կռւից յետոյ քիւրդերը թալանեցին հարևան գիւղերը: Պատերազմի դաշտում խաղաղ գիւղացիներից նրանք սպանեցին նաև մօտ 300 մարդ:

Դրանից յետոյ սկսվեց Քիւրդիստանում մի ուժգին եռացում (броженіе):

Ահա այդ երկրի իսկական դրութիւնը: Գոնէ այս ձմեռվայ համար կարելի է վերջ դնել «սահմանագծային վէճին» Թիւրքաց կառավարութեան հետ: Դա կը լինի գուցէ անգլօ-ռուսական համաձայնութեան ձևական կատարումը, բայց ոչ երկար ժամանակով: Զէ՞ որ նա կարող չէ զարգացող անցքերի ընթացքի առաջն առնել: Այս դրութեան փայլուն լուսաբանութիւն կարող է ծառայել հեռագրական հաղորդագրութեան վերջնաբանական նախադասութիւնը. «Ուրմիայում կուսակցական պառակտումները սուր կերպարանք են ստանում»:

Մենք կարծում ենք, որ միակ իսկական միջոցը Փոքր Ասիայի այս մասում ռուսական շահերը պաշտպանելու համար, չի լինի ոչ գրաւումը, որ նոյնիսկ հազիւ թէ իրագործվի առանց մեծ կորուստների մարդկանցով մի այդպիսի լեռնային նահանգում, ինչպէս Ուրմիան է, և ոչ պալիատիւներով, որ կոչվում է «սահմանագծային մասնաժողովներ»: Միակ իսկական միջոցը կը լինէր գիտակից, անշեղ և նպատակայարմար նըպաստումը պարսկական ժողովրդի այն բոլոր նախաձեռնութիւններին, որ ձգտում է բոլոր դասակարգերի և ազգութիւնների մասնակցելուն երկրի կառավարութեան գործում: Նոյն միջոցը կարող էր Թուլացնել և անգամ ոչնչացնել Թիւրքիայի մէջ կատարվող խռովութիւնները և ազգերի անջատման ձգտումները: Ժողովրդական ազատութիւնը՝ ամենալաւ միջոցն է ժողովրդական խռովութիւնների դէմ. որքան աւելի նպատակայարմար, քան Թիւրք իշխանութեան սարքած «սահմանագծային դէպքը»: Դա ծեծված ճշմարտութիւն է:

Եւ սակայն աւելի հաւանական է, որ մեր քաղաքականութիւնը ընթանայ հակառակ ուղղութիւնով:

Ահա ինչու այս հարցն էլ մենք համարում ենք ահալի: Ապագան ցոյց կը տայ թէ որքան մենք արդարացի ենք եղել:

—Իսկ անգլիան, կարող են մեզ առարկել: Անգլիան…

Անգլիան նախ և առաջ չունի մի Երևանեան նահանգ՝ Մակուի խանութեան հարևան: Մենք չենք ուզում խորը թափանցել դիւանագիտական գաղտնիքների մէջ, բայց կարծում ենք, որ Ուրմիա նահանգի գրաւումը առաջ կը բերէ սովորական կօմպենսացիան (բաւարարութիւն) մի այլ տեղ: Մենք յիշում ենք, որ Անգլիան վարձատրութիւն ստացաւ, հէնց որ մենք գրաւեցինք դժբաղդ Պօրտ-Արտուրը: Եւ մենք կորցրինք այդ գրաւման պատճառով շատ միլիարդներ:

Սակայն մենք սրանով ակի ընդդէմ չենք անգլօ-ռուսական համաձայնութեան. ընդհակառակը, մենք հէնց ընդունում ենք, որ Անգլիայի հետ համաձայնութեան մէջ պիտի մտնի այն տէրութիւնը, որ ուղիղ ըմբռնում է և հետևում իր շահերին:

Իսկ մենք… Առժամանակ մենք կը բաւականանայինք և նրանով, եթէ մեր արտաքին քաղաքականութիւնը լինէր զգոյշ:

Թարգմ. Պետրոս Զաքարեան

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ներքին

29 հոկտեմբերի

ԿԻԵՎ: Կայացաւ շաքարի գործարանների տէրերի ժողովը, ուր վճռվեց 2 միլիօն պուդ ազատ շաքարից փոխադրել արտասահման՝ շաքարի գները պահպանելու և շուկան շաքարի անհագին քանակութիւնից ազատելու համար:

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ: Զինուորական նաւահանգստի արհեստանոցներում գտնվեցին շատ անլէգալ գրուածքներ, զէնքեր, զինուորական նկարներ, ռումբեր, նամակներ, արձանագրութիւններ և Վլադիվօստօկի զինուորական կազմակերպութեան գլխաւոր կօմիտէի կնիքը:

ԿԱԶԱՆ: Համալսարանը այսօր բացվեց:

30 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ շտալմէյստեր Կուրլովը նշանակված է գլխաւոր բանտային վարչութեան կառավարիչ, մնալով շտալմէյստերի պաշտօնում:

ՌԻԳԱ: Ռօմանօվսկի փողոցում, բնակարաններից մէկում գտել են Լատիշեան սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան գաղտնի տպարանը: Գրաւվել են 20,000-ից աւելի անլէգալ գրուածքներ: Ձերբակալվել են մի քանի հոգի:

Արտաքին

29 հոկտեմբերի

ՏՈՒԼՕՆ: Ժամանեց Պարիզի խուզարկու ոստիկանութեան տեսուչը՝ լրտեսութեան նոր գործի առիթով քննութիւն կատարելու համար: Տարբեր լուրեր են պտտում. ասում են, որ Ուլմօյի գործը քննելու ժամանակ աջողվել է երևան հանել միջազգային կազմակերպութեան գոյութիւնը, որ պարապում է լրտեսութեամբ: Ֆրանսիայի ծովափեայ շրջաններում ձերբակալված են 4 հոգի: Լուրերին նայած, խուզարկութիւնները դեռ շարունակվելու են:

30 հոկտեմբերի

ՏՈՒԼՕՆ: Լրացուցիչ տեղեկութիւններից երևում է, որ կազմակերպութիւնը գործել է Մարսէյլում, Տուլօնում և Վինտիմիլէում: Ուլմօն այդ կազմակերպութեան չէ պատկանել: Տուլօնում ձերբակալված է 1 հոգի, Մարսէյլում 4 հոգի:

Պնդում են, որ Ուլմօյի բնակարանում գրաւված թղթերի մէջ գտնվում է մի փաստաթուղթ, որը պարզում է, որ Ուլմօն առաջարկել է Գերմանիային գնել իր մօտ եղած պլանները և նկարները: Ասում են, որ այդ փաստաթուղթը գտնվում է Պարիզում, դատական քննիչի մօտ:

Լրտեսութեան մէջ կասկածվելով ձերբակալվեց 5-րդ անձը՝ Նախկին մեքենավար Կրէպէն, որը երեք ամիս առաջ հեռացաւ էլեքտրոտեխնիկի պաշտօնից և յարաբերութիւնների մէջ էր բանտարկեալների հետ: Նա կազմակերպութեան ղեկավարներից մէկն է համարվում:

ՎԻԵՆՆԱ: Առաւօտեան նոր նշանակված մինիստրները երդվեցին, ապա նրանցից իւրաքանչիւրն ընդունվեց կայսրից ունկնդրութեան:

ՓԱՐԻԶ: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կարգադրութեամբ մինչև նոր տարի փակվեց բժշկական ֆակուլտէտը: Պատճառը այն անկարգութիւններն են, որ յարուցին ուսանողները գաւառից երկու պրոֆեսոր հրաւիրելու առիթով:

ԱԹԷՆՔ: Բացվեց պարլամենտի նստաշրջանը: Պրեզիդիումի ընտրութիւնը տեղի կունենայ մի շաբաթից յետոյ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9^1/_2$—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան:
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

### ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ
### ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ

ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)

Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.: Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.: Մարդատար—ցեր. 7 ժ 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.:

ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվօ, Ռիօն)

Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Գօրի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվօ—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.: Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Գօրի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվօ—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.: Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվօ—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.:

ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպօլ)

Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպօլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.: Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպօլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Ջուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.:

ԲԱԳՈՒԻՑ (Պետերբուրգի ժամանակով)

Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.: Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.:

ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.: Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.: Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.:

ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ.—առ. 1 ժ. 58 ր.: Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.:

ՋՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին: Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.:

Ն.ԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ.—7 ժամին: Մրդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.:

ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ԴԷՊՔ!
միայն 2 ր. 50 կ.

Ուղարկում եմ վերադիր վճարով, առանց կանխավճարի, իսկական ամերիկական կարի մեքենայ՝ վերջին ձևի, 3 տարվայ երաշխաւորութեամբ: Նոյն տեսակի մեքենայ մեծ դիրքով, գինը միայն 4 ր. 25 կ. և 6 ր. 50 կ.: Իւրաքանչիւր մեծ մեքենայի հետ ուղարկվում է բոլորովին ձրի. 1) շրաուբշտօկ, 2) թել, 3) պտուտակահան գործիք, 4) կարելու համար ասեղներ, 5) ձիթաման և 6) ձեռնարկ: Պահանջները խնդրեմ ուղարկել Ш. КУЛЬВАРСКОМУ, Варшава, Холодная, № 17. Պատկերազարդ պրէյսկուրանտ Զինգերի սիստ. կարի մեքենաներ (կրկնակի էժան բոլորից) ուղարկում եմ ՁՐԻ:
(հ. 31, ն. 13, 27, դ. 12) 4—1

Լոյս տեսաւ
Ա. ՋԱՆՆԵԱՆԻ
ՊԱՏԿԵՐՆԵՐ
ԳԻՆԸ 30 Կ.
Գրավաճառների մօտ: 1—10

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33:
(ա. օ.) 35—100

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան | 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 24—100

ԲԺԻՇԿՆԵՐ
Ն. Մ. ՊՐՕԶՕՐՕՎՍԿՈՒ
և Դ. Ն. ԱԹԱԲԷԳԵԱՆԻ
ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ծննդաբերական բաժանմունքով.
Մշտական մահճակալներ
հիւանդների և ծննդկանների համար:
Հանգստի և ընդհանուր պալատներ: Հիւանդանոցը ունի նոր ապարատներ էլեքտրականութեամբ և լոյսով բժշկելու համար: Անվտանգ ռօդիօններ: Բաց է հիւանդներին և ծննդկաններին ընդունելու համար ամենայն օր, ամբողջ տարի: Ըստ ցանկութեան համախորհուրդներ պրոֆէսսորների հետ: Պայմանները ուղարկվում են ձրի: Մօսկվա, Մեասնիցկայա փող., տ. Ստրագանօվսկու դպրոցի, բնակ. № 73, դուռ № 7, Բանկօվսկի միջանցքի կողմից: Հեռախօս № 214—54. (չ. ու.) 4—10

Լոյս տեսաւ
ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ
„ՌՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ“
Երկրորդ գրքոյկը
Բանաստեղծների պատկերներով: Գինն է 1 րուբլի: Դիմել հայ գրավաճառներին, կամ թարգմանողին՝ Москва, Тверская, Пименовскій пер., д. Шувалова, контора М. Л. Шоршорова, Александру Цатуріану. 4—5

ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ!

Իսկական աֆրիկական ոսկուց (չը ոսկեջրած)
Նոր հնարված տղամարդու կամ կանացի գրպանի ժամացոյց իսկական աֆրիկական ոսկուց, որը յայտնի մասնագէտներ չեն կարողացել տարբերել իսկական 100ր. ժամացոյցից, ծածկած 3 մասիվ փականքներով, լարելը առանց բանալիքի, իսկական մետաղէ, բրոնզէ թւացոյցով, ժամացոյցը տափակ, միջին չափսի: Իսկական աֆրիկական ոսկու ժամացոյցները վարձատրված են շատ շքանշաններով և առաւելութեան նշաններով, գինը 25 ր. փոխարէնը միայն 7 ր. 50 կ., 2 հատը 14 ր. 50 կ., 3 հատը 21 ր., 2-րդ տեսակի հասարակ թւացոյցով 6 ր. 50 կ., 2 հատը—12 ր. 75 կ., 3 հատը 18 ր.: Նոյն տեսակի բաց ժամացոյց մետաղէ, բրոնզէ թւացոյցով, գինը 5 ր. 50 կ., 2 հատը 10 ր. 50 կ., 3 հատը 15 ր. 25 կ.: Նոյն տեսակի բաց ժամացոյց հասարակ թւացոյցով գինը 4 ր. 25 կ., 2 հատը 8 ր., 3 հատը 11 ր. 50 կ.: Հասցէագրել՝ Т-во „ИНДѢЕЦЪ“ Варшава, 1-ая почт. к-ра, ящикъ № 30
Ուղարկում ենք անմիջապէս պատուէրը ստանալուց յետոյ վերադիր վճարով և առանց գրաւականի: Իւրաքանչիւր ժամացոյցի հետ ուղարկվում է շղթայ, բրելոկ նոյն ոսկուց և կաշուց քսակ ժամացոյցի համար: 6 հատ ժամացոյցի պատուէր տուողին յանկարծ 1 ժամացոյց ուղարկվում է ձրի:
Օգտվեցէք հազուագիւտ դէպքից!
(չ. շ.) 5—5

Լոյս տեսաւ
Ս. ԴԷՄՈՒՐԵԱՆԻ
„ՔՆԱՐ“
երգարանը (եւրօպական նօտաներով):
«ՔՆԱՐ»-ը բաղկացած է 106 երգ, մեծ մասը ժողովրդական երգերից. գինն է 1 ր.: Դիմել՝ Баку, Арм. школа, Гимназическая ул., Степану Демурянцу, կամ Моздокъ, С. И. Яралову, և կամ Петербургъ, ред. „Сапричъ“, Окрояну. (օ.մ.) 13—30

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Դասարանները ընդարձակելու պատճառով Դերբենդի իգական գիմնազիայի բոլոր դասարաններում բացվել են ազատ տեղեր: Տարեկան վճարը ֆրանսերէն լեզուի (որ պարտադիր է) դասաւանդութեամբ 50 րուբլի է: Քաղաքում կան աշակերտական բնակարաններ ամսական 20—25 ր., կան նաև այնպիսի բնակարաններ, ուր պարապում են դասերի կրկնողութեամբ:
(23, 27, 31) 3—3

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіакоповъ съ С-ми.
Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.